

536
Վ. Ն. ԲԻԼԼ-ԲԵԼՈՑԵՐԿՈՎՍԿԻ

ԿՅԱՆՔԸ ԿԱՆԶՈՒՄ Ե

ԴԻԵՍ 4 ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՄԲ

ԳԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ — 1937

55260

Վ. Ն. ԲԻԼԼ-ԲԵԼՈՅԵՐԿՈՎՍԿԻ

ԿՅԱՆՔԸ ԿԱՆՉՈՒՄ Ե

ՊԻԵՍ ՉՈՐՍ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ

Ռուսերենից թարգմանց
Վ. ՀԱՅԱԳՈՐԾՅԱՆ

19749 A $\frac{11}{38295}$



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՑԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ - 1937

Պատ. խմբ. Ա. Տեր-Հովնանյան
Տեխ. խմբ. Մ. Ճինիրալյան
Մրբագրել է Ա. Հ ա կ ո ղ յ ա ն

Հրատ. 3448, Տիրած 2000.
Հանձն. և արտադ. 27-1-37 թ.
Ստորագրված է ապրիլի
7-2-1937 թ. Ստամբ. Ա5.
Պատվեր 208.

Քայլատրված է Ռեպերուա-
րային հսկողության գլխավոր
վարչության կողմից կատար-
ման համար Ա լիտերով ՀՍԽՀ
տահմաններում № 33, 22 ոգու-
տուսի, 1935 թիվ. մերելան:

Уполкрайлит № О — 463
Типография Краевого
Армянского Издательства
„ГРО“, Ворошиловский
пр. № 27.

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

- ԶԱԴՈՎՂԱ. Վ. — Պրոֆեսոր, ծերունի
ԳԱԼԻՆԱ — Նրա աղջիկը, 27 տարեկան
ՆԻԿԻՏԻՆ — Գալինայի ամուսինը, 40 տարեկան
ԿԱՇԻՐԻՆ — Քիմիական տրեստի կառավարիչ, 39 տարեկան
ՄԱՎԻՉ Ա. Մ. — Պրոֆեսոր, ծերունի
-

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒՅՅՈՒՆ

ՆԻԿԻՏԻՆԸ գրքի պահաբանի առաջ, մտածկոտ՝ գրեք ե շեղեկում, քերթում ե:

ՆԻԿԻՏԻՆ. (Գիրքն ամուր փակելով) Գրքերը շատ են, չգիտես, վորից սկսել... մարդ մինչև իր մահը չի վերջացնի: (Գլուխը կախում ե յեվ մտն ե գալիս օեցնակում) Ի՞նչպես անել: Վճիռ կողմից մոտենալ: 14 տարի կորցրի... 14 տարի: Յեթե նույնիսկ այդ ժամանակի մի մասը քաղաքացիական կռիվների համար դուրս գանք, այդ դեպքումն ել մնացածը բավական կլիներ բանֆակի, անգամ վուզի համար: Այսքան տարի կորցրի: (ձեռքերն իսկիցով) Այսքան տարի, հիմար թափառաշրջիկ, (Հեզմանով) Բնադրի վրա հույս դրեցի: Մենք, բանվորներս, առանց դիտության ել կարող ենք ապրել: Գիտությունը՝ բուրժուական նախապաշարմունք ե: Խեղկատակ:

Մտնում ե ԳԱԼԻՆԱՆ՝ ձեռքն պորտփել յեվ կապոցներ:

ԳԱԼԻՆԱ. Ֆեդյուշա, բարև:

ՆԻԿԻՏԻՆ. (Ուրախ) Գալյա, վերջապես յեկար:

ԳԱԼԻՆԱ. Տխրե՛լ եյիլ:

ՆԻԿԻՏԻՆ. Ե՛լ մի ասի: Առանց քեզ ինձ վորբացած եմ զգում: Առանց քեզ կմեռնեյի:

ԳԱԼԻՆԱ. (Սեցյալը կարգի բերելով) Իդուր, սիրելիս, իդուր: Ձե՛ք վոր դրանով վիշտդ չես փարատի: Իրությունից դուրս գալու միջոցը վշտի մեջ չի:

ՆԻԿԻՏԻՆ. Բայց ի՞նչ անեմ: Ամաչում եմ նույնիսկ փողոց դուրս գալ: Ինձ թվում ե, վոր անցորդները յետեիցս ինձ են նայում ե փսխում՝ «մասաբարը... մասաբարը»...

ԳԱԼԻՆԱ. (Միծաղելով) Բան հնարեցիր: (Բարձր ծիծաղում ե)
Վնասարձր:

ՆԻԿԻՏԻՆ. Իսկ ամոթալի բիժը:

ԳԱԼԻՆԱ. Բայց չե՞ վոր բիժը վշտով չես մաքրի: Ավելի սեռ
միջոցներ են հարկավոր:

ՆԻԿԻՏԻՆ. Սովորել:

ԳԱԼԻՆԱ. Իհարկի: Այդ ե պահանջում կյանքը: Սովորել
Ահա թե ինչ ե հարկավոր: Այդ մասին շատ անգամ եմ ասել
քեզ:

ՆԻԿԻՏԻՆ. Գալյա, հասկացիր, մինչև սովորեմ, մինչև ձեռք
բերեմ անհրաժեշտ գիտելիքները, մի քանի տարի պիտի անցնեն.
այդ նշանակում ե, մի քանի տարի պետք ե կրեմ այդ խայտա-
ռակ դրոշմը:

ԳԱԼԻՆԱ. Ինչո՞ւ: Ինչո՞ւ յես այդպիսի մռայլ հեռանկար ստեղ-
ծում: Չե՞ վոր դու պետք ե նաև կուսակցական կամ հասարակա-
կան աշխատանք տանես: Դրանով ել ցույց կտաս քեզ: Վերջապես
հենց ուսումով:

ՆԻԿԻՏԻՆ. (Մտնելու հառաչելով) Վաչ... Այդ բոլորն այն չե, այն
չե...

ԳԱԼԻՆԱ. Իսկ ի՞նչ ես ուզում: Դու ի՞նչ ես առաջարկում:

ՆԻԿԻՏԻՆ. Յեթե Ֆրոնտ լիներ, յես անմիջապես կվերադարձ-
նեյի կուսակցության վստահությունը: Իսկ այժմ՝ չգիտեմ, ին-
չից սկսեմ:

ԳԱԼԻՆԱ. Բացի այն, ինչ ես յեմ առաջարկում, ուրիշ միջոց
չես գտնի: Միայն ինքդ քեզ ես մաշում: Մի նայիր, ինչի՞ նման
ես: Նիհարել ես, ծերացել: Այսոր ճաշել ես:

ՆԻԿԻՏԻՆ. Ճաշել եմ... ճաշել եմ:

ԳԱԼԻՆԱ. Խաբում ես, խաբում ես:

ՆԻԿԻՏԻՆ. Աստված վկա, չեմ խաբում:

ԳԱԼԻՆԱ. Դրոշ չարժի քո աստվածը:

ՆԻԿԻՏԻՆ. Ազնիվ խոսք:

ԳԱԼԻՆԱ. Փեղյա, դու գիտես, վոր յես տանել չեմ կարող,
յերբ սուտը ծածկում են ազնիվ խոսքով:

ՆԻԿԻՏԻՆ. Ազնիվ խոսք, ճաշել եմ:

ԳԱԼԻՆԱ. Յես գիտեմ, վոր դու կյանքումդ, իհարկե, շատ
անգամ ես ճաշել: Յես այսորվա մասին եմ հարցնում:

ՆԻԿԻՏԻՆ. (Հանցավոր ժպիտով) Այսօր:

ԳԱԼԻՆԱ. Այո, այսօր:

ՆԻԿԻՏԻՆ. Այսօր՝ վոչ:

ԳԱԼԻՆԱ. Այդպես ել գիտեցի: Իսկ ինչո՞ւ:

ՆԻԿԻՏԻՆ. Ախորժակ չունեցի: Ճիշտն ասած, յերեկ ել չեմ ճաշել:

ԳԱԼԻՆԱ. Անմիջապես գնա ճաշարան: Կամ վոչ, նստի՛ր, յես ինքս կվազեմ:

ՆԻԿԻՏԻՆ. Պետք չե, Գալոչկա, պետք չե: Դու հողնած ես: Յես ինքս կգնամ:

ԳԱԼԻՆԱ. (Ազատվելով) Քեզ չեմ հավատում: (Կատակով) Բաց թող, թե չե, ախանջդ կկծեմ: (Փախչում է դուրս):

ՆԻԿԻՏԻՆ. (Յեսեվից) Լնիլե ես դու, սքանչելի՛ր յես դու: Յեթե դու չլինեցիր, յես վշտից հարբեցու՞թյան կտայի ինձ: Չլսեցի՛քեզ: Չլսեցի՛ք թո՛ւ իմաստուն խորհուրդը: Այժմ, ահա հատուցում եմ: (Մոլեգիմ) Տխմար:

Իսուր ծեծում են: Մտնում է ԿԱՇԻՐԻՆԸ:

ԿԱՇԻՐԻՆ. Բարե, Ֆյոդոր:

ՆԻԿԻՏԻՆ. (Վեր բուշելով) Կաշի՛րին, Պավլո՛ւշկա... Գրո՞ղ... (Գրկախառնվում են):

ԿԱՇԻՐԻՆԸ, ՆԻԿԻՏԻՆԻՆ գրկած վեր է բարձրացնում:

ՆԻԿԻՏԻՆ. Վորտեղից ես գալիս:

ԿԱՇԻՐԻՆ. Սիբիրից, յեղբայր, Սիբիրից:

ՆԻԿԻՏԻՆ. Յերկա՞ր ժամանակով ես յեկել:

ԿԱՇԻՐԻՆ. Բանի դեռ չեն քշել:

ՆԻԿԻՏԻՆ. Ի՞նչ ես անելու մեզ մոտ:

ԿԱՇԻՐԻՆ. Քիմիական տրեստ եմ կառավարելու:

ՆԻԿԻՏԻՆ. Ո՛ր, գրո՞ղ: Իսկ շնո՞տ ե անցել այն որից, յերբ քեզ հետ միասին նալ ելինք բեռնում: Այդ ի՛նչպես հասար այդ կյանքին:

ԿԱՇԻՐԻՆ. Շատ հասարակ: Ինքը կյանքը հասցրեց: Սովորեցի: Արդյունաբերական ազդեցիկան եմ ավարտել: Այբենարանով սոցիալիզմ չի կառուցվի:

ՆԻԿԻՏԻՆ. Ճիշտ ե, Իսկ Սիբիրում ի՞նչ ելիր անում:

ԿԱՇԻՐԻՆ. Քիմիական արդյունաբերությունն ելի զարգացնում: Միայն դիտե՛ս, յես «Սիբիր» անունը կփոխեցի: Ի՞նչ կարիք

կա թողնելու: Սուլ վայր, աքսոր, ետապներ... դրանք անցյալն են հիշեցնում: Պետք է ուրիշ անուն գտնել:

ՆԻԿԻՏԻՆ. Համաձայն եմ, Իսկ ծննդավայրում յեղաբ:

ԿԱՇԻՐԻՆ. Յեղա: Պառագիւերը մեռել են, Յեղբայրներս կոխողումն են:

ՆԻԿԻՏԻՆ. Գյուղը փոխվել է:

ԿԱՇԻՐԻՆ. Այո: Վաթսուէն տոկոսը կոխողումն են: Բլրի վրայի յեկեղեցին հիշում եմ: Գմբեթին կարմիր դրոշակ է կախված: Ակումբ: Մանկամսուր: Գյուղը չես ճանաչի:

ՆԻԿԻՏԻՆ. Վաղուց չեմ յեղել այնտեղ: Կարիք էլ չկա: Մերոնք բոլորը մեռել են:

ԿԱՇԻՐԻՆ. Իսկ ուր են կիւնդ, աներդ:

ՆԻԿԻՏԻՆ. Աներս սանատորիայումն է, իսկ Գալյան շուտով կգա:

ԿԱՇԻՐԻՆ. Դե, իսկ դու ի՞նչ ես անում:

ՆԻԿԻՏԻՆ. (Տխուր) Ձանձրանում եմ:

ԿԱՇԻՐԻՆ. Ձանձրանում ես... Դձև...

ՆԻԿԻՏԻՆ. Այո, յես:

ԿԱՇԻՐԻՆ. Ինչո՞ւ:

ՆԻԿԻՏԻՆ. Հետադիմեցի: Կյանքից յետ մնացի: Կուտուրբաս պակաս է: (Պաուզա) Գրագիտություն, իհարկե, գիտեմ: Քչից-շատից սովորել եմ, բայց դրանք դատարկ բաներ են: Ե... (Ձեռք բափահատում է) Ի՞նչ ասեմ: Ավելի լավ է դու քո մասին պատմիր: Այդ ինչպէս յեղավ ակադեմիան ավարտեցիր, արդյունաբերական հրամանատար դարձար:

ԿԱՇԻՐԻՆ. Քայլ առ քայլ: Ինչպես քարքարոտ սարը բարձրանալիս: Նախ և առաջ ձեռնարկեցի ինքս ինձ: Իմ կենցաղը, ժամանակը կազմակերպել, բոլոր պայմաններում մի ժամ, յերկու ժամ կորզել՝ պարագելու համար: Սկզբում շատ դժվար էր հաղթահարել սովորական դանդաղաշարժությունս, բայց հետո վոչինչ, վարժվեցի, իսկ յերբ սխտեմը սովորական դարձավ, գործն սկսեց ավելի արագ ընթանալ, նույնիսկ ժամանակ էյի գտնում ավճիկներ յետևից ընկնելու և սպորտով զբաղվելու:

ՆԻԿԻՏԻՆ. (Տխուրյալ) Իսկ յես վոչ սխտեմ ունեմ, վոչ գիտություն: Բնազդի վրա հույս դրի: Դրա համար էլ այժմ հատուցում եմ:

ԿԱՇԻՐԻՆ. Ի՞նչ է պատահել:

ՆԻԿԻՏԻՆ. Յերեք տարով զրկվել եմ պատասխանատու աշխատանք տանելու իրավունքից:

ԿԱՇԻՐԻՆ. (Չարմացած) Ինչպիսի թե: Կատակ ես անում:

ՆԻԿԻՏԻՆ. Չե՞ք զարկեցի որինակելի բնակավայր կառուցելու:

ԿԱՇԻՐԻՆ. Հեռո՞, հեռո՞:

ՆԻԿԻՏԻՆ. Բայց դուրս յեկավ ֆլասարարություն:

ԿԱՇԻՐԻՆ. Վնասարարությո՞ւն:

ՆԻԿԻՏԻՆ. Ճարտարապետը ֆլասարար դուրս յեկավ: Շան վորդին ինձ խարեց: Նրան բանտ նստեցրին, իսկ ինձ՝ յերեք տարով վզակոթիս տվին:

ԿԱՇԻՐԻՆ. Այո, ցււալի յե:

ՆԻԿԻՏԻՆ. Ընդհանուր շինարարությանը մասնակցելու համար յես հանձն առա այդ գործը, սակայն պրակտիկան ցույց տվեց, վոր առանց ուսման հեռու գնալ չի կարելի: Հարկավոր ե տեխնիկան իմանալ:

ԿԱՇԻՐԻՆ. Այո, առանց թեորիայի վատ ե: Տասնինը թիվը չե:

ՆԻԿԻՏԻՆ. Հենց այդ ե, վոր կա: Իսկ յես գործում եյի ինչպես տասնինը թվին: Դրա համար ել տուժեցի:

ԿԱՇԻՐԻՆ. Այժմ ի՞նչ ես տնում:

ՆԻԿԻՏԻՆ. (Դառն հառաչելով) Անցաթղթերի սեղանի վարիչ եմ: Իսկ հիշում ես, պարտիզանական շոկատի հրամանատար եյի, քաղաքներ եյի գրավում, ազմական պարզեներ ունեմ:

ԿԱՇԻՐԻՆ. Իսկ ի՞նչ ես մտածում անել:

ՆԻԿԻՏԻՆ. Սատանան գիտի: Գիտություն ե հարկավոր: Իսկ ինչպիսի ձեռք բերեմ:

ԿԱՇԻՐԻՆ. Այնքան ել սարսափելի չե: Ժամանակ դեռ ունես:

ՆԻԿԻՏԻՆ. Վոչ, 40 տարի յե անցել: Հեղափոխությունից առաջ կորցրած տարիների համար այնքան ել չեմ ավաստում, հանցանքն իմը չե, բայց հեղափոխությունից հետո կորցրած տարիների հանցանքն արդեն իմն ե: (Յույց ցալով գրեծը) Այս բոլորը կարգալու, ըմբռնելու համար, հարկավոր ե դպրոցական նստարանից սկսել, այլ վոչ թե ծերացած հասակում:

ԿԱՇԻՐԻՆ. Յերևակայում եմ, ի՞նչ ծերունի յես: Պարտադիր ել չե, վոր դու անպայման պրոֆեսոր դառնաս:

ՆԻԿԻՏԻՆ. Յեթե վորակյալ բանվոր լինեյի, արտադրության մեջ բոլոր ուժերս կլարեյի, վրայիցս ամոթալի բիծը մաքրելու: Բայց ինչ կարող եմ անել այժմ: Հաշմանդամի նման նստել ե անցաթղթեր եմ դրում:

ԿԱՇԻՐԻՆ. Դու ի՞նչ հաշմանդամ ես:

ՆԻԿԻՏԻՆ. Նու, ուղիղի հաշմանդամ: Ի՞նչ տարբերություն: Տեսնել, թե ինչպես աչքիդ առաջ աճում են քեզ նմանները, տեսնել, ինչպես յերիտասարդությունը դալիս անցնում է քեզանից,—նախանձելի չե, այլ ամոթ ե: (Պաուզա) Ահա ինչ դրության մեջ են իմ գործերը:

ԿԱՇԻՐԻՆ. (Վեր ե կեցում յեվ քայլում սենյակում) Գո դրությունն այնքան էլ անհույս չի: Այդ մասին մենք դեռ քեզ հետ կխոսենք, իսկ առայժմ յես մի բան կարող եմ ասել քեզ. ինչպես էլ շուռ տաս, այնուամենայնիվ պետք է սովորես:

ՆԻԿԻՏԻՆ. Այդ ինքս էլ լավ եմ հասկանում:

ԿԱՇԻՐԻՆ. Ուրեմն էլ ինչո՞ւ ժամանակ կորցնել: Դործի օնցիբ: Մի քանի տարի՝ և դու այնպես կբարձրանաս, վոր ինքդ քեզ չես ճանաչի: Վոչ միայն բիծը կմաքրես, այլև կորցրած ժամանակդ կվերադարձնես:

ՆԻԿԻՏԻՆ. Հասկանում եմ, սկսելն է դժվար. մեկ էլ, վախենում եմ, (գրեթե վասնօգույց անելով) չկարողանամ հաղթահարել:

ԿԱՇԻՐԻՆ. Հիմար: Մի՞թե յես ուրիշ խմորից եմ:

ՆԻԿԻՏԻՆ. Այդ այդպես է:

ԿԱՇԻՐԻՆ. Ուրեմն էլ հարցն ինչո՞ւմն է: Յես քեզ կողմնեմ:

ՆԻԿԻՏԻՆ. (Տոտանվում է) Կմտածեմ:

ԿԱՇԻՐԻՆ. Ի՞նչ մտածելու բան կա:

ԳԱԼԻՆԱ. (Մտնելով) Բարև: Ո՞ւմն է քեզ մոտ բերել ալլահը:

ՆԻԿԻՏԻՆ. Պավլուշկա Կաշիրին: Շատ եմ պատմել քեզ նրա

մասին:

ԳԱԼԻՆԱ. Ա՜մա... Հիշում եմ, հիշում եմ: Շատ ուրախ եմ: Բարև ձեզ: Յես ձեր մասին լսել եմ: Ծանոթ եմ, լավ ծանոթ եմ:

ԿԱՇԻՐԻՆ. Յես նույնպես ձեզ հետ լավ ծանոթ եմ: Ֆյոդորը դրել է: Նույնիսկ ձեր բնութագրերը գիտեմ:

ԳԱԼԻՆԱ. Իսկ յես ձերը, վոր դուք Ֆյոդորի հետ մի գորամասումն եք ծառայել, հրակել եք, նահանջել, հարձակվել: Ամեն տեսակ թևեր, գնդացիներ, շտաբներ և մասշտաբներ: Ասացեք, դձևք էլ այժմ դրա նման փալաս եք (Նիկիտինին մտնումն շելով):

ԿԱՇԻՐԻՆ. (Ժպտալով) Ինչպե՞ս հասկանալ այդ:

ԳԱԼԻՆԱ. Նույնպես շփոթված, անվճռական: Խորհրդային Համլետ:

ՆԻԿԻՏԻՆ. Վոչ, նա արդյունաբերական ակադեմիան ե ավարտել: Քիմիական տրեստ ե կառավարում:

ԳԱԼԻՆԱ. Ահա թե ինչ: Սիրում եմ, Վոչ թե քիմիական տրեստների կառավարիչներին, այլ ճարպիկ մարդկանց եմ սիրում: Ահա սա (Նիկիթսինին ցույց տալով) վերջին ժամանակներս կորցրել ե իր ամբողջ յեռանդը, տխրում ե, դանդաղում ե՝ «Յես եմ մնացել, յես եմ մնացել»: Տեղ չի դառնում իր համար:

ԿԱՇԻՐԻՆ. Նա արդեն իր ամբողջ վիշտը բաց ե արել իմ առաջ:

ԳԱԼԻՆԱ. Ընկեր Կաշիրին, ոգնեցեք ինձ թափ տալ դրան, դեպի կյանքը վերադարձնել: Ընկերական ոգնություն ցույց տվեք ինձ:

ԿԱՇԻՐԻՆ. Այդ ասպարիզում արդեն մի քիչ բան արված ե:

ԳԱԼԻՆԱ. (Ուրախացած) Համաձայնության յեկմք:

ԿԱՇԻՐԻՆ. (տորամանկորեցն ցայելով Նիկիթսինին) Համարյա:

ԳԱԼԻՆԱ. (Նիկիթսինին) Ճիշտ ե:

ՆԻԿԻՏԻՆ. Կստածեմ:

ԳԱԼԻՆԱ. Մտածելու թնչ կա:

ԿԱՇԻՐԻՆ. Չեմքդ:

ԳԱԼԻՆԱ. Դե...

ՆԻԿԻՏԻՆ. (Ձեռք բափանաբելով, վնոական) Լավ:

ԳԱԼԻՆԱ. Ուռա: Վերջապես: Ընկեր Կաշիրին, դճւք ել ուսանելու նախորդակին տյապես դիվանհարում եյիք:

ԿԱՇԻՐԻՆ. Կարծեմ վոչ... Չեմ հիշում:

ՆԻԿԻՏԻՆ. Նա ամուր մարդ ե...

ԳԱԼԻՆԱ. Ի՞նչ մտքով:

ՆԻԿԻՏԻՆ. Մինչև կոկորդը կազմակերպված ե:

ԳԱԼԻՆԱ (Կարասիները տեղափոխելով) Այ, դա ուրիշ բան ե. Այ, այդպիսիներին հարգում եմ, գուցե այն պատճառով, վոր ինքս այդպես չեմ: Բայց ինչո՞ւ մինչև կոկորդ: Այդ արդեն չափազանց ե:

ԿԱՇԻՐԻՆ. Ֆյոդորը չափազանցեցնում ե: Իսկ դուք ձեզ հարգում եք:

ԳԱԼԻՆԱ. (Կիտակասելով) Մոսկալի:

ԿԱՇԻՐԻՆ. Իսկ թնչ դործի յեք:

ԳԱԼԻՆԱ. Յես նախադարձական եմ: Մանկավարժ: Շրջանային հրահանգչուհի յեմ:

ԿԱՇԻՐԻՆ. Բայց դուք, կարծեմ, անկուսակցական եք:

ԳԱԼԻՆԱ. Դժբախտաբար, չեմ հասունացել: Մի բան դեռ պակասում եմ:

ՆԻԿԻՏԻՆ. Համարձակու՞թյուն:

ԳԱԼԻՆԱ. Այո, յես վախենում եմ, վոր ուժերս չեն բավի մեծ, անձնագոհ գործի համար:

ՆԻԿԻՏԻՆ. (Քնկարեմ խփելով նրա ուսին) Բայց ֆիացած բաներում Գալինան մերն է:

ԳԱԼԻՆԱ. Ներքնապես, յես, իճարկե, հեղափոխական եմ, կուսակցութեան անկուսակցական անդամ:

ՆԻԿԻՏԻՆ. Հաստատում եմ:

ԳԱԼԻՆԱ. Ընկեր կաշիրին, ուզում եք ճաշել:

ԿԱՇԻՐԻՆ. Վոչ, շնորհակալ եմ:

ԳԱԼԻՆԱ. Այդ դեպքում թույլ տվեք ձեր ընկերոջը ճաշելու: Նա ծոմ է պահում: Յերեք որը մի անգամ է ճաշում:

ԿԱՇԻՐԻՆ. Ի դուր:

ԳԱԼԻՆԱ. (Նիկիտինին) Դե, գնա, գնա, նահատակ: Գնա ճաշիր:

ՆԻԿԻՏԻՆ. (Գնալով) Յես շուտով կվերադառնամ:

ԳԱԼԻՆԱ. Գուցե դուք ել քաղցած եք, ընկեր կաշիրին, Մի քաշվեք:

ԿԱՇԻՐԻՆ. Ինչո՞ւ պիտի քաշվեմ: Չահել աղջիկ հո չեմ:

ԳԱԼԻՆԱ. Չեմ կասկածում: Դուք ավելի նման եք խիզախ մարտիկի, անվեհեր կորիճի, քան ջահել աղջկա:

ԿԱՇԻՐԻՆ. Այդ ձեզ դուք չի՞ գալիս:

ԳԱԼԻՆԱ. Ընդհակառակը: Բայց դուք, յերևի դաժան մարդեք:

ԿԱՇԻՐԻՆ. Ինչո՞ւ, վճռեղից հնարեցիք այդ:

ԳԱԼԻՆԱ. (Խառամակորեմ) Գիտեմ... Լսել եմ: Ձեր բարեկամ է ընկեր Ֆյոդորից:

ԿԱՇԻՐԻՆ. Այսինքն:

ԳԱԼԻՆԱ. Նա ինձ պատմել է մի դեպքի մասին, յերբ դուք ստանաստութեամբ գնդակահարել եք ձեր ընկերոջը: Յե՛վ ցավեցին այն է, վոր Ֆյոդորն այդ մասին խոսում է վորպես դրական յերեույթի մասին: Իսկ յես բոլորովին այլ կարծիքի յեմ:

ԿԱՇԻՐԻՆ. Ա՞յն է:

ԳԱԼԻՆԱ. Նման գործողութուն կատարող մարդն, անկասկած, իր բնավորութեամբ պետք է դաժան, անզուժ մարդ լինի:

ԿԱՇԻՐԻՆ. (Լրջամբալով) Իսկ դուք լս՞վ եք հիշում ձեզ պատ-
ժած զեպոքի մանրամասնությունները:

ԳԱԼԻՆԱ. Ազոտ կերպով: Սակայն փաստն է կարևորը:

ԿԱՇԻՐԻՆ. Վոչ, ավյալ դեպքում կարևոր են մանրամասնու-
թյունները: Յես ձեզ կհիշեցնեմ դրանք: (Խլստ յնվ հասուկ) Սպի-
տակները նահանջելով, գնդակահարում էյին գերված կարմիր
բանակայիններին: Սվինով պատուել էյին կոմիսարի փորը: Մի
քանի ժամ եր մնացել կոմիսարին ապրելու: Նրա ցավերն այնպես
անտանելի էյին, վոր նա աղերսում եր բժշկին թունավորել կամ
գնդակահարել իրեն: Բժիշկը, բարոյական նկատառումներով
հրաժարվեց: Իրավացի յեր նա:

ԳԱԼԻՆԱ. Չգիտեմ: Իսկուսիտն հարց է:

ԿԱՇԻՐԻՆ. Պատասխանեցեք ուղղակի:

ԳԱԼԻՆԱ. Նու, ասենք բժիշկն իրավացի չեր:

ԿԱՇԻՐԻՆ. Իսկ յես իրավացի՞ էյի, ընկերոջս տանջանքից
ազատելով:

ԳԱԼԻՆԱ. Թերևս:

ԿԱՇԻՐԻՆ. Ուրեմն, ի՞նչ դաժանության և անգթության հարց
կարող ե լինել:

ԳԱԼԻՆԱ. Թերևս յես սխալվում եմ: Սակայն ասացեք, կարո՞ղ
էյիք դուք այդպես սպանել նաև, ասենք, ձեր բարեկամ Ֆյոդո-
րին կամ ձեր սիրած մարդուն:

ԿԱՇԻՐԻՆ. Յեթե դա ծայրահեղորեն անհրաժեշտ լիներ՝ կա-
րող էյի:

ԳԱԼԻՆԱ. Իսկ յես չեյի կարող:

ԿԱՇԻՐԻՆ. Իա ձեր ոգտին չի խոսում:

ԳԱԼԻՆԱ. Ընդունում եմ: Բայց այդպիսի դորժողության ըն-
դունակ մարդը պետք է առանձնահատուկ շղեր ունենա:

ԿԱՇԻՐԻՆ. (Իրմելով նքս մեմող Նիկիթինին) Ֆյոդոր, պետք է
լսեյիր, թե քո բացակայության ժամանակ յես ինչպիսի բնու-
թյապիք ստացա:

ՆԻԿԻՏԻՆ. Յերևակայում եմ: Իսկ դու պետք է լսես, թե նա ինչպես
ե ինձ հետ սիրո մեջ բացատրվում. պարտիզան, ծույլ, Արլոմով...

ԳԱԼԻՆԱ. Բայց մի՞թե յես իրավացի չեմ:

ՆԻԿԻՏԻՆ. Իրավացի յես, իրավացի...

ԿԱՇԻՐԻՆ. Սակայն իմ նկատմամբ մասամբ սխալվում եք:

ԳԱԼԻՆԱ. Կապրենք՝ կտեսնենք:

ՉԱՒՈՎ. (Չեռփին մի պորտֆել յեկ կլոր փաթաթած ֆորսեզմեք)
Բարև, զավակներս:

ԳԱԼԻՆԱ. Հայրիկ, վերադարձա՞ր: (Համբուրում է հորը) Ի՞նչ-
պես համարձակվեցիր, ո՞վ քեզ թույլ տվեց:

ՆԻԿԻՏԻՆ. Սանատորիայից փախել ես:

ՉԱՒՈՎ. Փախա, յեղջերույից ավելի արագ, ավելի արագ, քան
նապաստակը՝ արժվից:

ԳԱԼԻՆԱ. Սա ընկեր Կաշիրինն է, Ֆեդյայի մանկության ըն-
կերը: Անցյալում տրեխավոր, ներկայումս՝ քիմիական տրեստի
կառավարիչ:

ՉԱՒՈՎ. (Սեղմելով Կաշիրինի ձեռքը) Մեր յերկրում այդպիսի
բաներով չես զարմացնի:

ՆԻԿԻՏԻՆՆ վերցնում յեկ մի կողմ է դնում պորտֆելը: ԳԱԼԻՆԱ՝ ուզում է
հար ոսկիք:

ԳԱԼԻՆԱ. Ինչո՞ւ յես ժամանակից առաջ յեկել, անհանգիստ
ձեռուկ: Մոռացել էս, վոր դու հիվանդ ես: (Կաշիրինին) Սա նո-
րերս կաթված է ստացել: Ուղարկել են սանատորիա, իսկ նա
այնտեղից փախել է: Վոչ մի կարգապահություն. և դեռ հին բոլ-
շևիկ է, գիտնական...

ՆԻԿԻՏԻՆ. Ալեքսեյ Վասիլյեվիչ, իզուր ես վերադարձել: Շուտ
է, յուտ...

ՉԱՒՈՎ. Դե՞ս էլ սրանց նման:

ԳԱԼԻՆԱ. Խայտառակությունն է:

ՆԻԿԻՏԻՆ. Դու սովորելու կարիք չունես, շտապելու հարկ
չունես: Կարող եյիր խաղաղ հանգստանալ:

ՉԱՒՈՎ. Գնացե՞ք դուք ել... Հանգստանալ... Իսկ ի՞նչ ասել է
հանգիստ: Բուրժուական հասկացողությամբ, դա պարագություն
է, դատարկ ժամավաճառություն, բուսական կյանք, բացարձակ
պորտաբուժություն: Այդ տեսակ հանգստից կարելի չէ լուրջ
հիվանդանալ:

ԿԱՇԻՐԻՆ. Իսկ դուք ի՞նչպես եք պատկերացնում հանգիստը:

ՉԱՒՈՎ. Խաղաղ պայմաններ ստեղծագործական աշխատանքի
համար:

ԳԱԼԻՆԱ. Այսինքն՝ նստել սանատորիայում կամ հանգստյան
ուանը և շարունակել աշխատել:

ՉԱՒՈՎ. Միանգամայն ճշմարիտ է, զավակս:

ԳԱԼԻՆԱ. Ո՛ր, վոչ: Չես խաբի:

ՉԱԴՈՎ. Արդեն:

ԳԱԼԻՆԱ. Ի՞նչ կասեք սրան: Նա, ինչպես յերևում ե, արդեն մի բան արել է: Յես այդ տեսնում եմ նրա չարաճճի աչքերից:

ՉԱԴՈՎ. Միանգամայն ճիշտ ե:

ԳԱԼԻՆԱ. (Ծաղրելով) Միանգամայն ճիշտ ե... Ասա, ի՞նչ ես արել:

ՆԻԿԻՏԻՆ. (Կատակելով) Մամրդ ես սպանել:

ՉԱԴՈՎ. Ծերության հասակում այդ տեսակ դործով չեմ զբաղվում:

ԿԱՇԻՐԻՆ. Սիրահարվել եք:

ՉԱԴՈՎ. Դժբախտաբար սանատորիայում գտնվող միակ որիորդի տարիքն անհամապատասխան եր:

ՆԻԿԻՏԻՆ. Շատ յերիտասարդ եր:

ՉԱԴՈՎ. Կուսստաժը գրեթե ֆրանսական մեծ հեղափոխության ժամանակից եր և բացի այդ՝ ոժտված եր այնպիսի առավելություններով, ինչպիսին ե դնովի ատամները, վոր ճաշելիս վայր եր ընկնում:

ԿԱՇԻՐԻՆԻ (Ծիծաղելով) Յես այժմ հասկանում եմ, թե ինչու յեղջերույից արագ ե փախել:

ՆԻԿԻՏԻՆ. (Ծիծաղելով) Լավ կյանքից մարդ չի փախչի:

ԳԱԼԻՆԱ. Կատակը մի կողմ: Այնուամենայնիվ ասա մեզ, ինչ՞ուր յես ժամանակից առաջ թողել սանատորիան:

ՉԱԴՈՎ. Վորովհետեւ յես այնտեղ՝ իմ մեթոդով՝ հիսնալի հանգստացա: Կաթվածը, մահվան այդ տռաջին նախանշանը, ինձ շմեցրեց, բայց չվախեցրեց: Յես պատրաստվեցի մահվան: սակայն այն, ինչ յես արեցի սանատորիայում, մահվան հարցն ինձ շփոթեցնում ե: Ինձ համար շատ անհրաժեշտ ե գոնե յերկու տարի ապրել:

ԳԱԼԻՆԱ. Բժիշկները հավատացնում են, վոր դու յերկու տասնյակ տարի յել կապրես, յեթե...

ՉԱԴՈՎ. (Կսրելով) Յեթե վոչինչ չանեմ, յեթե աչքերս հառեմ գատարկ տարածության մեջ և լուսնոտի նման թափառեմ սանատորիայից սանատորիա. խորին շնորհակալություն: Յես պետք ե ավարտեմ խոշոր, պետական կարեվորություն ունեցող մի հայտնագործություն:

ԿԱՇԻՐԻՆ. Հետաքրքիր ե:

ԳԱԼԻՆԱ. (Լեզվաճեղձով) Ամերիկա յես գտել:

ՉԱԴՆՎ. Այո, Ամերիկա: Նոր Ամերիկա, ավետյաց յերկիր,
վորն իր տարածութեամբ հավասար և ամբողջ Արևմտյան Յեզ-
րոպային: Այդ Ամերիկան մեր յերկրին կտա սիրիոնավոր հեկ-
տար բերքաւատ հող և անսպառ հարստութիւն: Մտտիկ ապա-
գայում, ժամանակակից տեխնիկայի պայմաններում, նա կծածկվի
թավշապատ դաշտերով, քաղաքներով, ինդուստրիայով:

ԿԱՇԻՐԻՆ. Այդ բոլորն ապագայում:

ՉԱԴՆՎ. (Համազված) Այո, մտտիկ ապագայում:

ԿԱՇԻՐԻՆ. Իսկ այժմ ի՞նչ կա այնտեղ:

ՉԱԴՆՎ. Յուրտ, ձյուն, սառույց, տունդրա և տայգա...

ԲՈՂՈՐԸ. Միբիբբը:

ՉԱԴՆՎ. Գտաք: Նրա հյուսիս-արևելյան և արևելյան մա-
սերը:

ԳԱՂԻՆԱ. (Հուսախաբ) Դա ի՞նչ Ամերիկա յի:

ՆԻԿԻՏԻՆ. Այն, վոր Միբիբբում հանքային հարստութիւններ
կան, ամբողջ աշխարհին և հայտնի:

ԳԱՂԻՆԱ. Յե՛վ ապագայի ինդուստրիայի մասին ել խոսելու
հարկ չկա: Ինդուստրիան այժմ ել կա:

ԿԱՇԻՐԻՆ. Միայն թավշապատ դաշտերի մասին յես շատ եմ
կասկածում:

ՉԱԴՆՎ. Ինչո՞ւ:

ԿԱՇԻՐԻՆ. Ինչպես հայտնի յե, այնտեղի բնութիւնն ու
կլիման չին համապատասխանում:

ՉԱԴՆՎ. Իսկ յես ուզում եմ, վոր համապատասխանի:

ԿԱՇԻՐԻՆ. (Քիմիքալ) Հիանալի... Բայց այդ ինչպե՞ս անել:

ՉԱԴՆՎ. Գաղտնիքն ել հենց այդտեղ է: Յես ուզում եմ վո-
խել կլիման, իսկ նա կփոխի բնութիւնը:

Կարճ պաուզա: Բոլորն իրար են նայում:

ԳԱՂԻՆԱ. Հայրիկ, դու, պատահաբար չե՞ս... (Յայց տալով նա-
կատր):

ՉԱԴՆՎ. Վոչ, աղջիկս, չե...

ԿԱՇԻՐԻՆ. Կարելի՞ յե իմանալ՝ բանն ինչու՞նն և, յեթե գաղտ-
նիք չե:

ՉԱԴՆՎ. Իհարկե գաղտնիք չե: Յես արդեն սանատորիայից
գիտատեխնիկական խորհրդին ուղարկել եմ իմ նախադժի առաջին
վարիանտը, կոնսպեկտը:

ԳԱԼԻՆԱ. Ինչո՞ւ եւ կայանում նա, ընկեր Կորմբոս:

ՉԱՒՈՎ. Յես առաջարկում եմ Սիրբրի կլիման փոխել և դարձնել, ասենք, Սկանդինավյան թերակղզու կլիմայի նման:

ՆԻԿԻՏԻՆ. (Գտտալով) Հասարակ բան:

ՉԱՒՈՎ. Յես ուզում եմ... Գալոչկա, բեր այտեղ յերկրագունդը... Ահա այտեղ, ճապոնիայի ամերով անցնում ե կուրասիվո կոչված տաք հոսանքը: Այդ հոսանքը, ինչպես տեսնում եք, ճապոնիայից անցնելով, ապարդյուն կորչում ե բաց սվկիանոսում: Իմ խնդիրն ե՛ բռնել այդ տաք հոսանքը և թաթարական ծոցի վրայով քշել այն դեպի Սիրբրի ամերը:

ԳԱԼԻՆԱ. Հետո ի՞նչ:

ՉԱՒՈՎ. Հետո... Հոսանքը խիստ կփոխի կլիման, Տունդրաները կուխողների և սովխողների կվերածվեն:

ԳԱԼԻՆԱ. Ինչպես հեքյաթում:

ՆԻԿԻՏԻՆ Իսկ ի՞նչպես պիտի փոխես այդ հոսանքը:

ՉԱՒՈՎ. Յերկար պատմություն ե: Յերկու խոսքով չի ասվի: Ճանկանացողները կարող են ծանոթանալ, ահա այս կոնսպեկտի հետ: (Յույց ե ցալխ հաստ սեօր):

ԿԱՇԻՐԻՆ. (Ինն իրեն) Տունդրաները կվերածվեն կուխողների և սովխողների:

ԳԱԼԻՆԱ. Կծածկվեն կանաչ գորգերով...

ՆԻԿԻՏԻՆ. Վնաս չի տա...

ՉԱՒՈՎ. Յես ձեր դեմքին հեզնանք եմ տեսնում: Դա ինձ քիչ ե անհանգստացնում: Ավելի ցավալի կլինի, յեթե այդպիսի հեզնանք յերևա նաև իմ գիտնական կոլեգաների դեմքերին: Հարկ կլինի ապացուցել, համոզել, պայքարել, յեռանդ և ուժ վատնել, իսկ դա կարող ե ինձ համար ծանր լինել:

ԿԱՇԻՐԻՆ. Յես ժպտացի ձեր մտքերի թախչքի վրա: Նա չափազանց հետաքրքիր ե, բայց դործնականում հեշտ իրագործվող չե: Բարդ խնդիր ե:

ՆԻԿԻՏԻՆ. Յե՞վ հակայական միջոցներ կպահանջի:

ՉԱՒՈՎ. Արդյունքի համեմատությամբ, այդ միջոցներն աննշան են: Իսկ յեթե խոսենք բարդության մասին, ապա շատ ավելի բարդ եր մայր Ռուսաստանն ինդուստրիալ յերկիր դարձնելը:

ԿԱՇԻՐԻՆ. Դա, թերևս, ճիշտ ե:

ԳԱԼԻՆԱ. Գո նախազի՞ծը զարմանալի յե, յեթե պատկերացնելու լինենք նրա հեռանկարները, բայց այդ բոլորն ապագա-

յուս: Իսկ այժմ յես կցանկայի, Քրիստափոր Գոլումբոս, վոր դու վերադառնայիր սանատորիա:

ՉԱՒՈՎ. Հիմար-հիմար մի խոսիր: Այն, ինչ յես առաջարկում եմ, միանգամայն ռեալ եւ և իրագործելի: Ինձ ավելի ուրիշ բան եւ անհանգստացնում—մահն եւ անհանգստացնում: Իր անտեղի միջամտութեամբ նա կարող եւ ինձ հետ միասին վոչնչացնել նաև իմ նախագիծը: Այդ պատճառով հարկավոր եւ շտապել: Եթ, Տյոգոր, քո առողջութեան մեկ քառորդը յեթի իմը լինե՞ր...

ՆԻԿԻՏԻՆ. Իսկ ինձ՝ քո գիտութեան մեկ քառորդը:

ԳԱԼԻՆԱ. Առևտուր մի անեք: Հայրիկ, սիրելիս, չի՞ կրօնելի այդ բոլորն առանց հուզմունքի և լարվածութեան: Չե՞ վոր դա քեզ համար... զիտես...

ՉԱՒՈՎ. Քիտեմ, գիտեմ... Ամեն ոք յես սպասում եմ գիտատեխնիկական խորհրդի նախկին տեղակալ, ներկայիս նախագահ պրոֆեսոր Սավիչի պատասխանին: Չնայած նա բողբոջի չէ, բայց առաջավոր բանիմաց մարդ եւ: Յես նրան վաղուց եմ ճանաչում: Հին բարեկամս եւ:

ԳԱԼԻՆԱ. Մինչև քո նախագծի իրագործվելը, յես, հավանորեն, կարող կլինեմ ձեզ համար թեյ պատրաստել (Գնում ե):

ՆԻԿԻՏԻՆ. Առանց քաջըշտակների չի լինի:

ՉԱՒՈՎ. Յես վստահ եմ Սավիչի վրա: Նախագծի հետագա մշակումն ինձ չի անհանգստացնում: Ընդհակառակը, ստեղծագործ աշխատանքը թարմացնում և յերիտասարդացնում եւ Բժիշկներին չեմ հավատում: Նրանք հին շկոլայի տեր մարդիկ են, անկենդան Յես ինձ զգում եմ կոմյերիտական:

ԿԱՇԻՐԻՆ. Ձեր տեսքն այդ չի ասում:

ՉԱՒՈՎ. Դատարկ բան եւ Ի՞նչ բան եւ տեսքը... Կարևորն ինքնազգացումն եւ: Յես յերջանիկ եմ, վոր ապրեցի մինչև հեղափոխութեանը, վոր նրան կարող եմ նվիրել մեծ դժվարութեամբ ձեռք բերած իմ գիտելիքները:


ԳԱԼԻՆԱ. Ընկեր Քրիստափոր, նամակ:

ՉԱՒՈՎ. (Արագ վերցնում ե) Սավիչից ե:

ԳԱԼԻՆԱ. Միայն խնդրում եմ, հանգիստ, հանգիստ:

ՉԱՒՈՎ. (Զսպելով իրեն) Յես հանգիստ եմ: (Կարծես դիմամբ, յերկար զբաղվում ե ծրարով, դանդաղորեն բացելով այն) Յես հանգիստ եմ:

ԳԱԼԻՆԱ. (Անհամբեր) Դե. շուտ արա... շուտ:



ՆԻԿԻՏԻՆ. Հանկարծ նախագիծն ընդունված լինի միանգամից:
առանց ձգձգումների:

ՉԱԴՈՎԸ կարդում ե՛ մտում, բոլորն սպասում են:

ԳԱԼԻՆԱ. Բարձր, բարձր:

ՉԱԴՈՎ. (Բարձրաձայն կարդում ե) «Տեսականորեն քո նախագիծը չափազանց հետաքրքիր ե, միայն թե դու, Ալեքսեյ Վասիլևիչ, իզուր չես պահպանել բժշկական ուժիմը, խանդարել ես հանգիստը: Սպասում ենք քո լիակատար և շտապ առողջանալուն: Քո բարեկամ Ս. Մ. Սավիչ»: (ձևաթուղ ե ցամախը) Այդպես... (Հեզուցանալով) Տեսականորեն նախագիծը հետաքրքիր ե, իսկ գործնականորեն՝ յերևակայություն: Յես տեսնում եմ Սավիչի դեմքի շփոթությունը, հեզանքը նրա կոլեգաների դեմքերին: Ծերունին, ըստ ելուժյան, ցնդել ե: (Հայացքը ցորից դարձնում ե դեպի ցամախը յեվ կարդում) «Իզուր չես պահպանել բժշկական ուժիմը, խանդարել ես հանգիստը»: (Դառն հեզուցանալով) Վոչ, թանկագին կոլեգաներ, վոչ, ուսյալ Աբլուդիներ, յես կխանդարեմ և իմ, և ձեր հանգիստը: Յես կդիմեմ ավելի բարձր: Յես կդիմեմ կուսակցությանը: Մենք դեռ կպայքարենք: Մենք դեռ կպատերազմենք:

ԳԱԼԻՆԱ. Հայրիկ, սիրելիս, մի հուզվիր:

ՉԱԴՈՎ. Յես կպատրաստեմ մանրամասն ղեկուցում, դժգոհեր, թվեր, պլաններ և նույնիսկ նախահաշիվ:

ԿԱՇԻՐԻՆ. Հանդիստ, հանգիստ:

ՆԻԿԻՏԻՆ. Ի՞նչ հարկ կա տաքանալու: Դու կհաղթես:

ՉԱԴՈՎ. Յես ընդունում եմ մարտահրավերը:

ԳԱԼԻՆԱ. (Տրտուրյամբ) Սկսվում ե:

ՉԱԴՈՎ. (Կայտառ) Սկսվում ե:

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

ՅԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Բեմի վրա յերկու սենյակի, բաժանված միջնապատով և դռներով: Աջ կողմը Նիկիտինի և Գալինայի սենյակն է, ձախ կողմը՝ Չադովի, Նիկիտինը մագիբը խառնած ու խորասուզված, համառորեն կարդում է փնթփնթալով: Չադովը գծագրերի վրա յե աշխատում: Նրա սեղանի վրա՝ գլորուս, գրքեր, քարանդ:

ՉԱԴՈՎ. (Յեք բնկեցելով արոճի քիկուճփից) Ո՛ր... հոգնեցի, բայց նախագիծը գրեթե ավարտված է: Մնում է միայն զեկուցումը գրել: Իսկ հետո... (Մի րոպե մտածում է) Հետո կտեսնենք: (Նորից խոհարհիվում է գծագրերի վրա):

ՆԻԿԻՏԻՆ. Փո՛ւճ... հոգիս դուրս յեկավ... գլուխս բան չի մտնում: Ի՞նչ է լինելու հետո: (Մտածումով նայելով մեզ է բնկնում, սքափվում է, կտրծես վանելով ծանր մտքեր, մի ռուսկա ողի յե խմում յեվ դարձյալ վերցնում է գիրքը):

ԳԱԼԻՆԱ. (Շեմֆն) Դու դեռ սերտո՞ւմ ես: Ո՛ւր է ջո սխտեմը: Առջի, թի՛նչ ես դարձել: Դա ուղղակի անմտությունն է (վազում է սեղանի մոտ յեվ ծածկում է գրքեր) Առաջ անկարելի յեր գրքի անունն տալը, իսկ այժմ գրքից կտրել չի լինում:

ՆԻԿԻՏԻՆ. Ի՞նչ է պատահել, թի՛նչ ես պանիկա պցում:

ԳԱԼԻՆԱ. Ձե՛ վոր դու ինձ խոստացար այս յերեկո հանդստանալ, գնալ կինո կամ թատրոն: Այսպես վոր գնա, շուտով դու բոլորովին կմախք կդառնաս: Չորս ամիս էլ չի անցել, բայց արդեն չոփ ես դառել, Ո՛ւր է ջո սխտեմը:

ՆԻԿԻՏԻՆ. (Շիօք ցույց տալով) Ահավասիկ: Ժամը մեկ — մի պավաթ:

ԳԱԼԻՆԱ. Դա թի՛նչ է:

ՆԻԿԻՏԻՆ. 40 աստիճանի նարդան:

ԳԱԼԻՆԱ. Ոգնում է:

ՆԻԿԻՏԻՆ. Ինչպէս ասեմ... Բիչ վոր խմում ես՝ կիսատ ե
մնում, շատ ես խմում՝ սահմանն անցնում ե: Վոչ մի կերպ չափը
չեմ կարողանում գտնել, չափի զգացում չունեմ:

ԳԱԼԻՆԱ. Յե՛վ դու մտածում ես այդ սխտեմը գործադրել նաև
ուսման մեջ:

ՆԻԿԻՏԻՆ. Յես դա միայն փորձում եմ... Գիտական եքսպերի-
մենտ:

ԳԱԼԻՆԱ. (Շփոք վերցնելով) Յեթե մեկ ել տեսնեմ այս եքսպե-
րիմենտը, յիս լուրջ կբարկանամ... Չզվեիլի յի:

ՆԻԿԻՏԻՆ. (Բռնելով նրա ձեռքը) Մի նեղանար, Գալոչկա:
Այլևս չեմ անի: Ճիշտն ասած, յեթե դու չլինեիր, յիս այսօր
վշտից կխմեիր: Այնքան վերափոքական ե, վոր ասել չի կարելի:

ԳԱԼԻՆԱ. Ի՞նչ ե պատահել:

ՆԻԿԻՏԻՆ. Այսօր բլջի բյուրոյի ընտրություն եր: Թեկուզ
մեկն ու մեկը հիշեր իմ ազգանունը: Կարծես յես կենդանի յե
չեմ: Կարծես յես անհարգատ տարր եմ: Աժոթից պատրաստ եյի
դեռինը մտնել:

ԳԱԼԻՆԱ. Բան չկա, Յեղյա: Շատ բանում դու ինքդ ես մե-
ղավոր, բայց այնքան ել սարսափելի չի: Միայն թե խիղճը մա-
քուր լինի կուսակցութեան առաջ: Աշխատիր սովորել: Դեռ կա-
րող ես քո աշխատանքով ցույց տալ քիչ:

ՆԻԿԻՏԻՆ. Սովորել: Հեշտ ե ասել: Վորչափ շատ եմ կարդում,
այնչափ ափելի յեմ տեսնում, ինչքան հետաքրքիր ե դա, վորքան
անհրաժեշտ ե, և յես ինչքան քիչ բան գիտեմ, ինչքան յետ եմ
մնացել: (Գրեքը ցույց տալով) Ահա այստեղ մեծ մարզկանց
ուղեղներն ե ժառանգություն մնացել մեզ, իսկ յես՝ իսկ այժմ
հասկացա այդ: Քանի տարի կորցրի: Քանի տարի: (Մտնել հառա-
չում ե):

ԳԱԼԻՆԱ. Բավական ե: Հերիք ե: Կաշիւրինը չի՞ յեկել:

ՆԻԿԻՏԻՆ. Վոչ:

ԳԱԼԻՆԱ. Ինչու յի նա սկսել ուշ-ուշ գալ, քիչ ե պարսպում
հետդ:

ՆԻԿԻՏԻՆ. Ժամանակ չունի:

ԳԱԼԻՆԱ. Գուցե նրա համար անհաճո յի իմ ներկայութեանը,
իմ քննադատութեանը: Նա ինքնասեր մարդ ե:

ՆԻԿԻՏԻՆ. Բոլորովին վոչ. ընդհակառակը, դու նրան շատ ես
դուր գալիս:

ԳԱԼԻՆԱ. Նու, չե՛ մի: Դիվանագիտության և բանեցնում:

ՆԻԿԻՏԻՆ. Իզուր ես այդպես կարծում:

ԳԱԼԻՆԱ. Դե, աստված նրա հետ: Հազնվիր և դուրս յեկ
փողոց՝ մաքուր ող շնչելու (Գլխարկը ծածկելով նրա գլխին) Գնա...
(Հրամ է դուրս) Չմտածես մեկ ժամից շուտ վերադառնալ: Շեմքից
ներս չեմ թողնի:

ՆԻԿԻՏԻՆ. Լսում եմ թանկագին հրամանատար: Լսում եմ,
Գալոչկա:

ՉԱԴՈՎԸ տեղից վեր բռնելով, որովելով վազում է դեպի դուռը յեկ փակաճեք
զցում. ԳԱԼԻՆԱՆ դուռը ծածկելով ՆԻԿԻՏԻՆԻ յետվից, մտնում է միջնաբերդի յեկ
դուռը ձեռնում:

ՉԱԴՈՎ. Ո՞վ է:

ԳԱԼԻՆԱ. Իբբ չգիտես: Բաց արա: Բաց արա:

ՉԱԴՈՎ. (Դիտմամբ սեփում է) Գալոչկա, յես դեռ անկողնում
եմ: Ծուլանում եմ վեր կենալ:

ԳԱԼԻՆԱ. Քեզ ասում են՝ բաց արա:

ՉԱԴՈՎ. Ա՛խ, վորչա՞վի ֆլաստակար անձնավորությունն էս դու:
Արդեն քունս տարել եր:

ԳԱԼԻՆԱ. Ի՛նչ խելոքն է: Ժամը 10-ին արդեն անկողնումս ե:
Ցես քեզ բան պիտի հայտնեմ:

ՉԱԴՈՎ. Վաղը առավոտը կհայտնես:

ԳԱԼԻՆԱ. Բաց արա, թե չե՛ մինչև առավոտ կձե՛ծեմ: (Մե-
ծում է):

ՉԱԴՈՎ. Մի ձե՛ծիր միայն, խսկույն կբանամ (Բացում է):

ԳԱԼԻՆԱ. Ահա թե ինչպես ես քնում—հագնված:

ՉԱԴՈՎ. Ցես հենց նոր պատրաստվում եյի պառկել:

ԳԱԼԻՆԱ. Այդպես, այդպես...

ՉԱԴՈՎ. Քիչ է մնում վերջացնեմ: Թույլ տուր: Չե՛ վոր յես

միշտ զիջում եյի քեզ, յեբբ դու փոքրիկ եյիր:

ԳԱԼԻՆԱ. Իզուր: Իսկ յես քեզ վո՛չ մի պայմանով չեմ զիջի:
Աշխատանքը հավաքել է մարշ անկողին: Դու ամբողջովին դեղ-
նել ես:

ՉԱԴՈՎ. Դա արևից է: Արևն է խանձել:

ԳԱԼԻՆԱ. Արե՛ֆն է խանձել:

ՉԱԴՈՎ. Այսօր, քո խորհրդի համաձայն, յերկու ժամարեի
տակ տապակվեցի:

ԳԱԼԻՆԱ. Տապակվեցիր: Մարտի արևի տակ:

ՉԱԴՈՎ. Յես այդ չեյի ուղում ասել... ուղում եյի ասել—

տաքացա:

ԳԱԼԻՆԱ. Այսոր նույնիսկ արև չի յեղել:

ՉԱԴՈՎ. Մի՛թե:

ԳԱԼԻՆԱ. Անմիջապես անկողին:

ՉԱԴՈՎ. Չեմ ուղում:

ԳԱԼԻՆԱ. Ի՞նչպես վարվեմ յես քեզ հետ:

ՉԱԴՈՎ. Վոչինչ չի ոգնի:

ԳԱԼԻՆԱ. Այդ դեպքում յես կսկսեմ բղավել քո ականջին:

ՉԱԴՈՎ. Հպատակվում եմ... միայն, աղաչում եմ, թույլ տուր
դձագիրը վերջացնեմ.

ԳԱԼԻՆԱ. Թույլ չեմ տա: (Հորք քառ ե ցալիս դեպի անկողին,
համում ե նրա կոտիկները):

ՉԱԴՈՎ. (Անոգնակաճ) Արարիչ աստված, ինչ տանջանք ե
չափահաս աղջկա հայր լինել... Բայց հասկացիր, յի՛թե հանկարծ
ինձ... վոչ, վոչ, վոչ կաթված, այլ ասեմք, մրսեմ:

ԳԱԼԻՆԱ. Ա՛յ, հենց այդ չմրսելու համար հրամայում եմ...

Զանգի ձայն:

ՉԱԴՈՎ. Չանդահարում եմ:

ԳԱԼԻՆԱ. Հավանորեն Տեղյան ե: Արդեն թարմացավ: (Գնում
ե հառիվան սենյակը) Յես հիմա նրանց ցույց կտամ: (Չաղսվք
առիքից ոգսվելով, գուլպաներով մտնելու ե սեղանին յե՛վ նորից
աշխատում):

ԳԱԼԻՆԱ. (Դուռը չբանալով) Կորիք այստեղից, անտանելի,
հեռացիր, ներս չեմ թողնի:

ԿԱՇԻՐԻՆ. Ինչո՞ւ:

ԳԱԼԻՆԱ. (Կամուրիով) Ա՛խ... (Դուռը բացելով) Ներեցեք,
սիրելիս, այդ յես ձեզ չեյի ասում, այլ Ֆյոդորին:

ԿԱՇԻՐԻՆ. Իսկ նրան ինչու:

ԳԱԼԻՆԱ. Իբ բնավորության համար: Ուժով եմ դուրս արել
փողոց՝ թարմ ող շնչելու: Գլխացավ ե սկսվել... Նա համարյա
ուժասպառ ե յեղել:

ԿԱՇԻՐԻՆ. Իսկ սիրտեմն ինչպե՞ս:

ԳԱԼԻՆԱ. Այսորվանից սկսել ե ողի խմել:

ԿԱՇԻՐԻՆ. Կատակ եք անում:

ԳԱԼԻՆԱ. Ահա ձեզ իրային ապացույց: (Նիօր ցույց տալով):
ԿԱՇԻՐԻՆ. Լա՛վ է:

ԳԱԼԻՆԱ. Քանի յես մտան եմ, նա իրեն որինավոր է պահում, բայց յես ամբողջ որը տանը չեմ: Բացի հիմնական աշխատանքից, մի շարք հասարակական պարտականություններ եմ կրում, իսկ տանը յես յերկու յերեխայի դայակ եմ:

ԿԱՇԻՐԻՆ. Ին՞չ յերեխաներ:

ԳԱԼԻՆԱ. Ամուսնուս և հորս:

ԿԱՇԻՐԻՆ. Լա՛վ յերեխաներ են:

ԳԱԼԻՆԱ. Հարգավոր է նրանց կերակրել, հագցնել, դաստիարակել:

ԿԱՇԻՐԻՆ. Շահագործում են ձեզ:

ԳԱԼԻՆԱ. Նրանք դանդատվում են, վոր ընդհակառակը, յես եմ նրանց շահագործում:

ԿԱՇԻՐԻՆ. Իսկ դուք ինչո՞ւ յեք ձեզ վրա վերցնում այդ ծանրությունը: Մի՞թե նրանք չեն կարող իրենք իրենց կառավարել:

ԳԱԼԻՆԱ. Իրենք: Մի շարաթվա մեջ նրանք կամուսկալեն: Գիտեք, հեշտ չե չափահաս մարդկանց դաստիարակելը: Ընկեր Պավել, յես ձեզ կխնդրեյի հաճախ այցելելիք մեզ և ոգնելիք ինձ՝ Ֆյոդորին դաստիարակելու:

ԿԱՇԻՐԻՆ. Ուրախությամբ: Այդ առավել ևս հնարավոր է, վորովհետեւ իմ խնդրանքը, այս որերս ինձ ընակարան են հատկացնելու ձեր տանը:

ԳԱԼԻՆԱ. Դա շատ լավ է:

ԿԱՇԻՐԻՆ. Յեկ դուք չե՞ք վախենա ինձ հետ մի հարկի տակ ապրելուց:

ԳԱԼԻՆԱ. Յես ապահով եմ:

ԿԱՇԻՐԻՆ Ուրեմն դուք չեք փոխել ձեր կարծիքն իմ մասին:

ԳԱԼԻՆԱ. Առայժմ վոչ: Իմ քննադատությունից զգուշացած, դուք, իհարկե, կաշխատեք դառնալ հեզ դառնուկ:

ԿԱՇԻՐԻՆ, (Բարեհոգի) Վոչ, յես, ավելի լավ է, կաշխատեմ մնալ այնպես, ինչպես կամ:

ԳԱԼԻՆԱ. Տեսնենք: Յերբ կտեղափոխվեք մեզ մոտ և կսկսեք հաճախակի այցելել մեզ, այդ ժամանակ կտեսնենք, թե ինչ պտուղ եք դուք:

ԿԱՇԻՐԻՆ. Խնայեցեք:

ԳԱԼԻՆԱ. Յերևակայում եմ, քանի հանցագործություն կա ձեր խղճի վրա, քանի կին եք գլխահան արել: Գիտականորեն դուք ամուսնությունն, իհարկե, ժխտում եք, սակայն Փլիբատի համար մարքսիստական բազա յեք գտնում: Դուք իսկական...

ԿԱՇԻՐԻՆ. Դոն-ժուան:

ԳԱԼԻՆԱ. Վոչ, Ձեկ փոր թափող:

ԿԱՇԻՐԻՆ. (Միծաղելով) Ո՛խ...

ԳԱԼԻՆԱ. Վոչ, իսկապես: Ինձ հետաքրքրում է ձեր անձնական կյանքը:

ԿԱՇԻՐԻՆ. Ինչո՞ւ յե դա ձեզ այդպես հետաքրքրում:

ԳԱԼԻՆԱ. Ինտիմ կյանքը բաց և անում մարդու հյուսթյունը, ցույց է տալիս նրա իրական դեմքը, Դուք, հարկավ, չեք ժխտի, վոր ձեր կյանքում շատ անգամ եք հրապուրվել:

ԿԱՇԻՐԻՆ Ձեմ ժխտում:

ԳԱԼԻՆԱ. Այնուամենայնիվ՝ մենակ եք: Յես իհարկե, նկատի չունեմ ամուսնությունն իր քաղցենիական նշանակությամբ:

ԿԱՇԻՐԻՆ. Յես ձեզ հասկանում եմ:

ԳԱԼԻՆԱ. Համաձայնվեցիք, վոր դա մասամբ տարորինակ է:

ԿԱՇԻՐԻՆ. (Միծաղելով) Տարորինակ վոչինչ չկա: Ուզողակի չեմ հանդիպել համապատասխան որչիկտի:

ԳԱԼԻՆԱ. Ի՞նչ նուրբ ճաշակ: Մի՞թե այդ բոլորը կուլտուրայի հետևանք է:

ԿԱՇԻՐԻՆ. Վոչ, յես այդպես եմ յիղել նաև իմ նախնական վիճակում:

ԳԱԼԻՆԱ. Այդ դեպքում ի՞նչ է պահանջվում ձեր որչիկտի համար: Մեծ երուզիցիամ: Հասարակայնություն:

ԿԱՇԻՐԻՆ. Դա այնքան էլ վատ չէ, բայց պարտադիր չէ:

ԳԱԼԻՆԱ. Մեսսալինայի տեմպերամենտը:

ԿԱՇԻՐԻՆ. Վոչ, այդ արգեն չափազանց է:

ԳԱԼԻՆԱ. Գուցե, ընդհակառակը, կույս Մարիամի հեղու-թյունը:

ԿԱՇԻՐԻՆ. Նու, վոչ... միայն վոչ այդ...

ԳԱԼԻՆԱ. (Միծաղելով) Կամ, գուցե, դուք կողմնակից եք թե-վավոր Երոսի տեսությանը:

ԿԱՇԻՐԻՆ. Նույնպես վոչ:

ԳԱԼԻՆԱ. Այդ դեպքում ի՞նչ եք դուք ցանկանում. ի՞նչ է ձեզ հարկավոր:

ԿՇԻՐԻՆ. Յես կցանկանայի հանդիպել սովորական կնոջ, վորը նման լիներ...

ԳԱԼԻՆԱ. Նու, նու...

ԿԱՇԻՐԻՆ. Վորը նման լիներ ձեզ...

ԳԱԼԻՆԱ. (Շփոթված) Ահա ինչ... Այդ ինչ է, կատակ, թե՛ ձեր պրիոմներից մեկը:

ԿԱՇԻՐԻՆ. Միանգամայն լուրջ եմ ասում:

ԳԱԼԻՆԱ. Ուրեմն, աստված հաջողի: Այդ տիպը կինը վրեժ-խնդիր կլինի ձեզանից բոլոր մեղքերի համար:

Մտնում է ՆԻԿԻՏԻՆԸ:

ԳԱԼԻՆԱ. Զրոսնեցի՞ր:

ՆԻԿԻՏԻՆ. Բարե, Պավլուշկա: (Սեղմում է ձեռքը):

ԳԱԼԻՆԱ. Յեդյա, ընկեր Պավլիլը մեր տանն է ասպրելու:

ՆԻԿԻՏԻՆ. Յես ինքս եմ առաջարկել նրան: Հաճախ կայցելի-բացի դրանից, ակտիվորեն կոգնի: Ծերուկին չեմ ուզում անհան-դատացնել, աշխատանքից կտրել:

ԳԱԼԻՆԱ. Ա՛խ, այո... ծերուկի մասին մոռացա: Նա, խար-դախը, հավանորեն հանգամանքից ոգտվելով, շարունակում է տնքալ աշխատանքի վրա: (Վազում է Զադսվի մոտ) Այդ ինչ էս անում: Վերջապես վերջ տալու յես քո այդ տունդրա-ներին:

ԶԱԴՍՎ. Անպայման վերջ կտամ: Անպայման: Բացի յեղջե-րուններից նրանք ունեն են հարկավոր:

ԳԱԼԻՆԱ. Անմիջապես քնիր:

ԶԱԴՍՎ. Քնում եմ... քնում... Ամեն ինչ ավարտված է:

ԳԱԼԻՆԱ. Տեսքը վատ է, հայրիկ, ինձ դուր չի գալիս գեմ-քիդ գույնը:

ԶԱԴՍՎ. Այդ քեզ թվում է Դա միբաժ է: Յես ինձ հիանալի յեմ զգում: Յես նույնիսկ չեյի հրաժարվի վորևե տաք բան խմելուց, որինակ, թեյ:

ԳԱԼԻՆԱ. Իսկույն, թանկագինս, գնամ տաքացնեմ, իսկ դու առայժմ պակիր: (Գնում է):

ԶԱԴՍՎ. (Հոգնած) Այո, հարկավոր է պակիր: (Նստում է գիվանի վրա) Հոգնեցի: Կղիմանամ արդյոք մինչև պայքարի վերջը:

ԿԱՇԻՐԻՆ. (Նիկիթիևին) Այդ բոլորը հիմարություն են: Ուզեցիր վազելով լեռը բարձրանալ, բայց շունչդ կտրվեց: Միանգամից ես ուզում: Ով է յետևիցդ ընկել:

ՆԻԿԻՏԻՆ. Խայտառակության դրոշմը: Նա ճնշում է ինձ: Ընկերներս խույս են տալիս ինձանից ինչպես բորտից, անուշադրության են ժատնում: Յես նկատում եմ, վոր ինձնից ճնշվում են, ծածուկ բռնկուտի յես յենթարկում: Այո, յես մեծ սխալ գործեցի: Դրա համար ինձ հարվածեցին: Ճիշտ է: Ինձ հարկավոր է հարվածել, բայց ինչու անդպաշտության աստիճան: Չե վոր կուսակցության համար յես մտում եմ նույն Նիկիտինը, ինչ վոր եյի տասնինը թվին: Լավ չե:

ԿԱՇԻՐԻՆ. Այո, լավ չե: Սակայն դու չե՞ս չափազանցնում: Խիստ կասկածամտության հետևանք չե՞ արդյոք:

ՆԻԿԻՏԻՆ. Վոչ, այդպես է:

ԿԱՇԻՐԻՆ. Բոլոր ընկերներդ այդպես են վերաբերվում:

ՆԻԿԻՏԻՆ. Վոչ, այդ ասել չեմ կարող:

ԿԱՇԻՐԻՆ. Այդ դեպքում, յեթե յես քո տեղը լինեյի, այսպես կդատեյի՝ հիմարների համար որնք չգա գրած, իսկ առողջ մտածողություն ունեցողն ընդունակ է սխալը գիտակցական հանցագործությունից զանազանել:

ՆԻԿԻՏԻՆ. Այդ այդպես է:

ԿԱՇԻՐԻՆ. Միայն թե կարիք չկա պոչը սեղմել: Քեզ պահիր հանգիստ, արժանիքդ մի կորցնի: Իու հանցավոր ես, բայց քո վարքագծով մի խորացնի հանցանքդ:

ՆԻԿԻՏԻՆ. Իու իրավացի յես:

ԿԱՇԻՐԻՆ. Սակայն դռնանք ուսմանը: Ուրեմն, ինչպես ասում ես, աշխատանքի ընթացքում այդպես կոնձիլու պատճառն ամոթանքի դրոշմն է:

ՆԻԿԻՏԻՆ. Վոչ միայն դա: Մեր տեմպերը: Յերը պիտի հասնեմ նբանց: Յես հո քսան տարեկան չեմ... Յես մի քայլ առաջ եմ անցնում, իսկ կյանքը վերստով է առաջ դնում: Ինձ անհրաժեշտ է տեսականորեն ավարտելով, ընդհանուր կրթություն, վորակ ձեռք բերել, վորպեսզի ազատվեմ անտանելի անցաթըրթերի սեղանից և անցնեմ կենդանի աշխատանքի:

ԿԱՇԻՐԻՆ. Այդ բոլորն այնքան էլ սարսափելի չե, յեթե զինվես համբերությամբ, աշխատես սիսահմով, այլ վոչ թե ցնորվածի պես: Այլապես, զգուշացնում եմ՝ վոչինչ դուրս չի գա: Յե՛վ

ուսումը չես ավարտի, և առողջութունդ կկորցնես: Ֆիզիկոսու-
րայով պարապում ես:

ՆԻԿԻՏԻՆ. Ինչո՞ւ: Յես և դու այդ կուսուրդայով բավականա-
չափ զբաղվել ենք, յերբ մեջքներովս բեռներ եյինք կրում:

ԿԱՇԻՐԻՆ. Խմում ես:

ՆԻԿԻՏԻՆ. Սակավ: Տարին յերկու, յերեք անգամ:

ԿԱՇԻՐԻՆ. Սաստիկ:

ՆԻԿԻՏԻՆ. Գիտակցութունս կորցնելու աստիճան:

ԿԱՇԻՐԻՆ. Հիանալի սխտեմ ե: Յեզ Գալիսիան վոչի՞նչ չի ասում:

ՆԻԿԻՏԻՆ. Նու, ի՞նչ ես ասում: Յես այդ անում եմ նրա բա-
ցակայության ժամանակ: Իսկ դու մի՞թե չես խմում:

ԿԱՇԻՐԻՆ. Իսկ դա մի՞թե անհրաժեշտութուն ե:

ՆԻԿԻՏԻՆ. Ինչպե՞ս ե քեզ հաջողվում այդ: Ո՞վ ե սովորեցրել
քեզ:

ԿԱՇԻՐԻՆ. Չեմբերլենը, Մակդոնալդը, Լյուդ-Ջորջը, Բու-
դուինը: Նրանք յուրաքանչյուրը յոթանասուն տարեկան են,
բայց նայիր, ինչպես են աշխատում: Ստեղծագործական հասա-
կումն են զգում իրենց, իսկ ինչո՞ւ: Վերջինսեռ ուժիմ են պահպա-
նում, ֆիզիկոսուրդայով են պարապում, կուսուրդական կյանք են
վարում:

ՆԻԿԻՏԻՆ. Այդ բոլորը ճիշտ են: (Դուռը ձեռնում են) Մտեք
(Սավիլիին տեսնելով), Պրոֆեսոր Սավիլի: (Բարեվում ե յեզ գերկա-
յացնում Կաթրիցին) Ընկերս, Կաշիրին:

ՍԱՎԻԶ. Շատ ուրախ եմ: Սավիլի, Սերգեյ Միխայլովիչ: (Նի-
կիտինին) Ընկեր Նիկիտին, յես կուզենայի տեսնել նաև Գալիսիա
Ալեքսանային, յերկուսիդ հետ մի կարևոր գործի մասին խոսելու:

ՆԻԿԻՏԻՆ. (Արոտ առաջարկելով) Նստեցեք: Իսկույն կկանչեմ:
(Դուռը բացելով) Գալիսիա, այստեղ յեզ:

ԳԱԼԻՆԱ. Ի՞նչ ե պատահել:

ՆԻԿԻՏԻՆ. Պրոֆեսոր Սավիլին ե յեկել:

ԳԱԼԻՆԱ. Բարև ձեզ, Սերգեյ Միխայլովիչ: (Սեղմում ե ձեռքը):

ՍԱՎԻԶ. Յես յեկել եմ խոսելու Ալեքսեյ Վասիլյովիչի վեճակի
մասին:

ԳԱԼԻՆԱ. Ավելի ճիշտ, նրա նախագծի մասին:

ՍԱՎԻԶ. Թե մեկի, և թե մյուսի:

ԳԱԼԻՆԱ. Խնդրեմ: Ընկեր Կաշիրինը մեր բարեկամն ե: Կա-
րող եք նրա ներկայությամբ վստահորեն խոսել:

ՍԱՎԻԶ. Հիանալի:

ԳԱԼԻՆԱ. Բայց, ներեցեք, ինչո՞ւ դուք միայն այժմ մտածեցիք դադարել այդ հարցով: Չե՞ վոր բավական ժամանակ ե անցել: ՆԻԿԻՏԻՆ. Ալեքսեյ Վասիլյեվիչն արդեն զեկուցման ե պատրաստվում:

ՍԱՎԻԶ. Յես Մոսկվայում չեյի: Յես հեռավոր գործուղում եյի գնացել, ինչպես ասում են՝ ջհանդամի տակը: Վերադարձիս միանգամայն ազդեցի, յերբ իմացա, վոր Ալեքսեյ Վասիլյեվիչը վոչ միայն իր նախագծից ձեռք չի քաշել, այլ ընդհակառակը շարունակում ե պայքարել:

ԳԱԼԻՆԱ. Այո, այդպես ե: Նա հաստատ համոզված ե իր գազափարի իրական լինելուն:

ՍԱՎԻԶ. Այդպես, այդպես: Բանը նրանումն ե, վոր ինձ խիստ անհանգստացնում ե Ալեքսեյ Վասիլյեվիչի հիվանդությունը: Այդ գրությամբ ուղեղի ե ջղերի լարումը կարող ե կործանիչ ազդեցություն ունենալ նրա առողջության վրա. կարճ ասած, խնդիրը վերաբերում ե մեզ համար հարգելի անձնավորության կյանքին:

ԳԱԼԻՆԱ. Այո...

ՍԱՎԻԶ. Այդ պայքարը միտք կունենա, յեթե այդ բոլորն արդարանար, բայց, դժբախտաբար, նրա նախագիծը գործնակա՜նում միանգամայն անիրագործելի յե:

ԿԱՇԻՐԻՆ. Ի՞նչ հաստատ համոզված եք դրանում:

ՍԱՎԻԶ. Հավատացած եմ Հարուստ Փանտաղիա: Հիանալի թեմա յե գյուտի համար: Պետք ե կարծել, վոր հեռավոր ապագայում ամեն տեսակ Փանտաղիաներն, ինչպես Մարսի ե յերկրագնդի անմիջական կապը, կամ լուսնի վրա համբողջելը՝ թերևս հնարավոր կդառնան, բայց ներկա մոմենտում այդ բոլորն իրական չեն:

ԿԱՇԻՐԻՆ. Ամբողջ դժբախտությունը նրանումն ե, վոր ընկեր Չադովը հաստատ համոզված ե, թվոր իր գազափարն իրական ե հենց այժմ, մեր եպոխտյում:

ԳԱԼԻՆԱ. Վորքան ինձ հայտնի յե, վոչ վոք ե վոչ մի անգամ նրան Փանտաղյոր չի համարել:

ՍԱՎԻԶ. Խնդիրը նրանումն ե, վոր ստեղծագործական պրոցեսն այնքան արբեցուցիչ ե, վոր նրա ազդեցությանը յենթարկվում են վոչ միայն պատանիները, այլև մենք, ծերունիներս:

ՆԻԿԻՏԻՆ. Դուք ի՞նչ եք առաջարկում:

ՍԱՎԻԶ. Միացյալ ուժերով սթափեցնել ձերունուն, պահպանել նրա կյանքը և հանդիստ պարգևել, վորին նա, անկասկած, արժանի յի: Յես նախատեսում եմ ինչով ե վերջանալու այդ բոլորը, յիթե նա շարունակի իր պայքարը և խոստովանում եմ, ինձ համար տարրերնակ ե, վոր դուք՝ նրա միակ աղջիկը՝ չեք դուռն այդ:

ԳԱԼԻՆԱ. Բայց յես ի՞նչ կարող եմ անել, յերբ նա այդչափ պատահ ե և այդչափ համառ:

ՍԱՎԻԶ. Այո, Ալեքսեյ Վասիլյեվիչի համառությանը յես ծանոթ եմ, բայց, դժբախտաբար, ամեն մի առավելություն բացասական ե դառնում, յիթե նա տեղին չի գործադրվում:

ԳԱԼԻՆԱ. Միակ բանը, վոր կարող եմ, այդ այն ե, վոր հետեւեմ նրան և թույլ չտամ հոգնել:

ՍԱՎԻԶ. Բայց դա քիչ ե: Յեկեք ընդհանուր ուժերով աղղենք նրա վրա և սթափեցնենք:

ԳԱԼԻՆԱ. Փեղյա, դու ի՞նչ ես կարծում:

ՆԻԿԻՏԻՆ. Ամբողջ հարցը նրանումն ե, արժե, թե՞ չարժե, վոր Ալեքսեյ Վասիլյեվիչն իրեն զոհի: Մակայն ի՞նչ կարող եմ ասել, քանի վոր յես ուսումնական չեմ...

ԳԱԼԻՆԱ. Ընկեր Պավել, իսկ դուք ի՞նչ կարծիքի յեք:

ԿԱՇԻՐԻՆ. Յես կուզեյի պրոֆեսորին մի քանի հարց տալ:

ՍԱՎԻԶ. Խնդրեմ:

ԿԱՇԻՐԻՆ. Չեք կարծում արդյոք, վոր յուրաքանչյուր նոր, համարձակ, արտասովոր միտք սկզբում կասկած ե հարուցում:

ՍԱՎԻԶ. Ինչ վերաբերում ե ինձ, յես, ինչպես իմ, նույնպես և ուրիշների շատ համարձակ մտքեր եմ պաշտպանել և իրագործել, բայց Ալեքսեյ Վասիլյեվիչի միտքը Չղերի լարվածության և հիվանդության արդյունք ե:

ԿԱՇԻՐԻՆ. Նշանակում ե, դուք հաստատ հավատացած եք, վոր նրա նախագիծը պիտանի չե: Անիրագործելի յե:

ՍԱՎԻԶ. Յես այդ մասին շատ անգամ եմ ասել:

ԿԱՇԻՐԻՆ. Այդ դեպքում դիմենք հիշողության: Դուք հիշում եք քաղաքացիական կոնֆլիկտի այն մոմենտը, յերբ ամեն կողմից թշնամիներով շրջապատված Սորերդային Ռուսաստանը բաղկացած եր ինքը քաղցած, վորլուտ նահանգներից, յերբ վո՛չ միայն հաց, այլև վտաքի փաթաթան չեր ձարվում: Մտածում

եյիք դուք այն ժամանակ, պրոֆեսոր, վոր այդ իննը նահանգը կզառնա աշխարհի մեկ վեցերորդ մասը:

ՍԱՎԻԶ. Ճիշտն ասած, չեյի մտածում Մակայն դա այլ բան է: **ԿԱՇԻՐԻՆ.** Իստաննք ձեզ ավելի մոտ բնագաղառի: Իուք հիշում եք, ինչպես 20 թվին խորհուրդների Ց. րդ համագումարում ներկայացվեց յերկրի երկտրոֆիկացման նախագիծը:

ՍԱՎԻԶ. Շատ լավ եմ հիշում:

ԿԱՇԻՐԻՆ. Այդ մասին յես անձամբ շատ սրախոսություններ եմ լսել՝ «տա աստված, վոր դոնե պրիմուս լինի», կամ՝ «կոմունիզմ՝ դա Խորհրդային իշխանությունն է, պլյուս պրիմուսը»: Այն ժամանակ դուք յենթադրում եյիք, վոր այդ նախագիծը յերբևե կիրագործվի:

ՍԱՎԻԶ. Այն ժամանակ յես չեյի յենթադրում:

ԿԱՇԻՐԻՆ. Իսկ հինգ տարի առաջ, դուք հավատացած եյիք, վոր մենք կունենանք այն, ինչ ունենք այժմ:

ՍԱՎԻԶ. Կասկածում եյի վոչ միայն յես, այլև կոմունիստներից վոմանք:

ԿԱՇԻՐԻՆ. Մի խոսքով, յուրաքանչյուր անգամ նոր, համարձակ միտքը ձեր մեջ կասկած է առաջացնում: Գուցե, այս անգամ ևս ձեր կասկածն անհիմն է:

ՍԱՎԻԶ. Վոչ, այստեղ հարցը կասկածի մեջ չէ... Այն մտքերը, վորոնց մասին դուք ասացիք, մտածված, կշռադատված և մշտեված են մեծ մարդկանց կողեկախվի կողմից: Իս կուեկախվի ստեղծագործության և վոչ անհատի մտքի արդյունք է:

ԿԱՇԻՐԻՆ. Իսկ դուք չեք կարծում, վոր մեծ մարդկանց կուեկախիվ միտքը հեղափոխության ծնունդն է, մասսաների ստեղծագործությունը, նրանց ընդունակությունն այդ մտքերն իրագործելու: Այլապես այդ մտքերն ի՞նչպես կարող եյին իրականանալ տեխնիկապես հետամնաց յերկրում:

ՍԱՎԻԶ. Կարծում եմ այդպես է:

ԿԱՇԻՐԻՆ. Յեվ, հետևաբար, պետք է յեզրակացնել, վոր անհատի, ընկեր Չադովի միտքը՝ դա նույնպես մեր եպոխայի ստեղծագործության արդյունքն է:

ՍԱՎԻԶ. (Շփոթված) Բայց այդ չի նշանակում, վոր յուրաքանչյուր միտք կամ նախագիծ իրական է: Չեղ, կարծեմ, հայտնի յե, վոր մեզանում շատ գյուտեր և նախագծեր են արխիվ նետվել:

ԿԱՇԻՐԻՆ. Միանգամայն ճիշտ է, բայց յես գիտեմ նաև, վոր քիչ չեն այն գյուտերն ու նախագծերը, վորոնք արխիվից դուրս են բերվել: Ամբողջ հարցը նրանումն է, վորպեսզի շտապ յեզրակացություններ չհանվի: Յես նկատի ունեմ ընկ. Չաղովի նախադիծը:

ՍԱՎԻԶ. (Ուսերը բորովելով) Յես ձեզ հասկացա: Դուք ուղղակի ուզում եք ասել, վոր յես ամբողջությամբ չեմ զգում մեր յերկրի զարկերակը և վոր իմ կասկածը նույնպես, յեթե վոչ գիտակցական, համենայն դեպս, յենթագիտակցական պահպանողականության արդյունք է: (Շփորված ժպտալով) Հավանական է... Չնայած դուք վերջնականապես ինձ չհամոզեցիք, սակայն Ալեքսեյ Վասիլյեվիչի սիրուն, պատրաստ եմ մեկ անգամ ևս մտածելու նրա նախագծի վրա: Ինձ միայն լրացուցիչ նյութ է հարկավոր: Ի՞նչպես ստանալ այդ:

ՆԻԿԻՏԻՆ. Բայց չե վոր Ալեքսեյ Վասիլյեվիչը պատրաստվում է մոտ որբերս զեկուցում տալու:

ՍԱՎԻԶ. Ա՛խ, ահա թե ինչ: Առավել լավ: (Վեր կենալով) Չեմ անհանգստացնի նրան: Հաղորդեցեք նրան իմ սրտագին վողջույնը և թող չբարկանա ու չկարծի, թե իմ քննադատության մեջ չար մտադրության թեկուզ ստվեր կա: Յտեսություն: (Հրածեծ է օտիս յեվ գնում) Իսկ նյութերն ինձ ուղարկեցեք:

ՆԻԿԻՏԻՆ. Բայց դու լավ սեղմեցիր նրան: Նույնիսկ նախանձեցի: Այդ ինչո՞ւ յես այդպես չեմ կարողանում:

ԳԱԼԻՆԱ. Նորից սկսեց թոնթորալ: Ա՛խ, տեր աստված, ինչ եմ անում... Իմ Բրիտանիոնը թեյի յե սպասում: (Անապարտաբավ վազում է):

ՆԻԿԻՏԻՆ. (Ազահուրյամբ վերցնում է գիրքը) Լավ, յես կհաղթեմ, կամ գլուխս կփշրեմ:

ԿԱՇԻՐԻՆ. Բո շտապողականությունն ինձ դուր չի գալիս: Միշտ ինչ վոր ծայրահեղություններ: Հանգստացիր, զբոսնիր, հետո կսկսենք:

ՆԻԿԻՏԻՆ. Չանձբալի յե մենակ թրև գալը:

ԿԱՇԻՐԻՆ. Մարմամարզությամբ զբաղվիր:

ՆԻԿԻՏԻՆ. Ավելի ձանձրալի յե:

ԶԱԴՈՎ. (Յերելալով) Ինչի՞ մասին եք վիճում, յերիտասարդներ:

ԿԱՇԻՐԻՆ. Ֆիզիկուլտուրայի դերի մասին:

ԶԱԴՈՎ. (Հոգնած) Ճիշտ է: Հենց վոր իմ նախագիծն ընդունվի, յես ել Ֆրանսիայի նախագահ Դումերիլի նման մարմնա-

մարդութեամբ կզբաղվեմ ե նրա նման կսկսեմ վազվզել դարա-
վանդում տրուսիկով: Իսկ մեղանում վազելու շատ տեղեկ է կան:
Վերջիննք թեկուզ Սիրիբրը: Այժմ այնտեղ արջեր կան, անհրա-
պույր ե, բայց ապագայում խոստանում եմ բոլոր այդ խոչըն-
դոտները վերացնել:

ԳԱԼԻՆԱ. (Յեռելալով) Ահ, դու արդեն այստեղ ես, անհան-
դիսա յերագոյ:

ՉԱԴՈՎ. Վոչ քունս ե տանում, վոչ ել պառկել եմ ուզում,
Գալոչկա:

ԳԱԼԻՆԱ. Թեյը խմիր ե պառկիր: (Նստեցնում ե յնվ բաժակ
մատուցում: Չագովը խմում ե) Ֆեդյա, թեյ:

ՉԱԴՈՎ. Յերիտասարդ ընկերներ, դուք չեք գնահատում ձեր
տարիքը, չեք նկատում ձեր յերջանկութունը: Ֆեդյա, ինձ տուր
քո տարիքը ե յես ամբողջ աշխարհը շուռ կտամ:

ՆԻԿԻՏԻՆ. Չեմ տա: Ինքս եմ ուզում այդ գործով զբաղվել:

ՉԱԴՈՎ. Չգիտեմ, գուցե այն պատճառով, վոր բավականու-
թյուն եմ ստանում իմ աշխատանքից, գուցե այն պատճառով,
վոր վստահ եմ ղեկուցման հաջողությանը,— յես աներևակայելի
վերելք եմ զգում: Այդ ստեղծագործական ինքնազգացումն ամե-
նալավ նախապայծառն ե այն բանի, վոր յես առողջ կլինեմ,
վոր յես, թերևս, կապրեմ մինչև այն որը, յերբ իմ նախագիծը
կակավի իրագործվել: Չի կարող պատահել, վոր դեպի կյանքս
ունեցած այսորինակ զօրությունն իր բարեբար ազդեցությունը
չունենա իմ որգանիդսի վրա: Յերջանկությունից, ասում են, չեն
մեռնում: Յեթե վիշաք կրծում ե սիրտը, ինչո՞ւ ուրեմն մտքի
ուրախությունը չի կարող արգավանդել հիվանդ մարմինը: Ըն-
կեր Պավել, մենք դեռ քեզ հետ կվազվզենք Սիրիբրում: Մենք դեռ
կմաբտնչենք: Մենք դեռ... (Նրա ձայն ձեռքն սկսում ե հանախա-
կի դողալ յնվ բաժակը դիպչել արանյին):

ԳԱԼԻՆԱ. Ի՞նչ պատահեց... Չեքդ ինչո՞ւ յե դողում...

ՉԱԴՈՎ. (Կակազելով) Չ-չը-գի-գի-ա-տեմ (Սկսում ե դողալ
նայելով ձայն վոսքի):

Բոլորն անարթկված վեր են բռնում: Մտեցնում են ՉԱԴՈՎին: Նրա ձայն ձեռքն
անգոր կախվում ե: Բաժակը փռվում ե, վոտքը ծալվում ե: ՉԱԴՈՎն ընկնում ե
նրանց քեկերի վրա:

ԳԱԼԻՆԱ. (Բացակայելով) Հայրիկ:

ՆԻԿԻՏԻՆ. Յերկորդ հարվածը:

ԿԱՇԻՐԻՆ. Հանգիստ Առանց պանիկայի: Տանե՞ք անկողին
(Կաշիրինը վերցնում է Չաղովը ձեռքը, զարգեցանքն է ստուգում):
ԳԱԼԻՆԱ. Ի՞նչ... մեռած... կենդանի՞ յե...

ՉԱՂՈՎԸ մի բան է փերփերում:

ԿԱՇԻՐԻՆ. (Լսելով) Ի՞նչ:

ՉԱՂՈՎ. (Ուժ տալով) Զե-կ-կու-ցու-ու-ը-զե-կ-կու-ց-ցու-մը
ինչ-պես-կը-լի-նի (Աչքերը փակում է):

ԿԱՇԻՐԻՆ. Բժիշկ կանչեցեք:

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

ՅԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ՁԱԴՈՎ. (Ձադովը խալաքը հագին նստած է հասմանդամի սալա-
կի վրա: Նայում է քարեգին) Տաք քամին վեր է բարձրանում
գեպի հյուսիս: Ցուրտ ողբ հագնում է տաք գոլորշիներով: Ձեր-
մասսիճանը բարձրանում է: Գեղինը հալչում: Հողագործության
համար նոր հեռանկարներ են բացվում: (Պատուգա) Ստտանան
տանի, կաթվածն ինչո՞ւ վեկուցումից հետո չբռնեց ինձ: Կուսակ-
ցությունն ընդառաջեց ինձ: Մամուլն սկսեց խոսել: Ինչ անմիտ
բան է հենց ափին խեղդվելը: Հիմար բան է: Անտանելի յե:
(Ձդայնորեն հեռւմ է անիվը, պսպում է սենյախում):

Հարեվամ սենյախում գտնվում են բժիշկը, ՆԿԻՏԻՆԸ, ԳԱԼԻՆԱՆ: ՆԿԻՏԻՆԸ Երե-
քել է, գգգգված է, չար յեվ վայրի:

ԳԱԼԻՆԱ. Կարճ ասած, դուք նրա առողջությունն այնքան
ել լավ չեք գտնում:

ԲԺԻՇԿ. Կատարյալ հանգստության պայմաններում Ալիքսեյ
Վասիլյեվիչը կծրոզ կլինեք մի քանի տարի, և նույնիսկ ալիլի
ապրել, սակայն, ցավը նրանումն է, վոր չկայացած զեկուցման
միտքը տանջում է նրան:

ԳԱԼԻՆԱ. Դժբախտաբար այդ այդպես է:

ԲԺԻՇԿ. Հետևաբար, հանգստության մասին խոսելն ավե-
լորդ է:

ԳԱԼԻՆԱ. Իսկ թնչ կասեք, յեթե նրան հնարավորություն
տրվի հանգես գալ, դուրս կորզել այդ փուշը նրա գլխից:

ԲԺԻՇԿ. Վոչ մի դեպքում: Զեկուցումն ու մտքերի փոխանա-
կությունը կտանն յերեք ժամից վոչ պակաս, իսկ յես շատ եմ
կասկածում արդյոք զեկուցողը կկարողանա նույնիսկ կես ժամ

գիմանալ: Վոչ, այդ յելույթը կարող ե նրա համար ճակատագրա-
կան դառնալ: Աշխատեցեք, յի՛թե կարող եք, ազդել նրա վրա,
ուշադրութիւնն այլ ուղղութիւնս պարզել:

ԳԱԼԻՆԱ. Անտզուտ ե: (Նիկիթիմից ցույց ցալով) Դե, իսկ սրա
մասին:

ԲԺԻՇԿ. Առնվազը մեկ տարով դադարեցնել պարագմունք-
ները, հակառակ դեպքում նա վերջնականապես կջնասի իր
ուղեղը: (Հրածեօս ե ցալիս) Վողջ լինեք: Ճտեսութիւնս: (Գնում ե):

ԳԱԼԻՆԱ. Լսեցիր:

ՆԻԿԻՏԻՆ. Գրողը նրան տանի: Մի տարով պարագմունքները
դադարեցնել... Ուզածն ինչ ե:

ԳԱԼԻՆԱ. (Բորբոված) Ինքդ ես մեղավոր: Բեղ նախադգու-
շացնում եյինք, համողում եյինք:

ՆԻԿԻՏԻՆ. Մի տարի կորցնել և մոռանալ այն, ինչ ձեռք եմ
բերել...

ԳԱԼԻՆԱ. Բայց հասկացիր, ուրիշ յելք չկա: Հակառակ դեպքում
դու կկորցնես արկիւն, գուցե և ամենը: Դու իղուր Պավելին
չլսեցիր:

ՆԻԿԻՏԻՆ. (Կատաղած) Պավել... Պավել... Ի՞նչ ես շարունակ
Պավելին աչքս խոթում: Նա հո ինձ համար որեւէ չի:

ԳԱԼԻՆԱ. Նու, իսկ բժիշկը:

ՆԻԿԻՏԻՆ. Յես ինքս ինձ համար բժիշկ եմ և գիտեմ ինչ պետք
անել: Այս բուրբն անսովոր լինելու հետեանքով ե: Յերբ յես
առաջին անգամ սկսեցի ապրանքանավը բեռնել, սկզբում մեջքս
անքում եր, վոսկորներս ցավում եյին, աչքերս մթնում եր, բայց
հետո վարժվեցի, բձուր մեջքիս՝ վազելով եյի աստիճանները
բարձրանում:

ԳԱԼԻՆԱ. (Հոգնած հառաչելով) Բայց այս դեպքում բանն ուրիշ
ե: Այտեղ ուղեղի հարցն ե:

ՆԻԿԻՏԻՆ. Հարկավոր ե թափ տալ այն, թարմացնել:

ԳԱԼԻՆԱ. Ինչպէս: Ինչո՞վ:

ՆԻԿԻՏԻՆ. Դեղով:

ԳԱԼԻՆԱ. Ի՞նչ դեղով:

ՆԻԿԻՏԻՆ. Սեփական: Գնում եմ դեղատուն: (Գլխարկը ծածկում
ե յեվ գուրս գնում):

ԳԱԼԻՆԱ. Տարբրինակ ե: Առաջ դեղի մասին լսել չեր կարող,
իսկ այժմ ինքն ե դեղատուն վազում: Շատ տարբրինակ ե:

(Կանգնում ե ծանր մտածմունքի մեջ: Դուռը ծեծում են: Ուժի յե-
զալիս): Մտեք: (Ուրախ) Ա՛, Պապեր... Շատ լավ ե, վոր յեկար:
Յես ինձ շատ տխուր եմ զգում բժշկի այցելությունից հետո:

ԿԱՇԻՐԻՆ. Բժիշկն ի՞նչ ասաց:

ԳԱԼԻՆԱ. Վոչ մի լավ բան — վոչ հորս, վոչ ել Ֆյոդորի մա-
սին:

ԿԱՇԻՐԻՆ. Այդ առանց նրա ասելուն ել հայտնի յեր:

ԳԱԼԻՆԱ. Ի՞նչ անել:

ԿԱՇԻՐԻՆ. Կմտածենք:

ԳԱԼԻՆԱ. Դու ինչո՞ւ վերջերս սկսել ես ուշ-ուշ դալ:

ԿԱՇԻՐԻՆ. Ժամանակ չունեմ:

ԳԱԼԻՆԱ. Ճիշտ չե: Դու ուղղակի ձանձրանում ես մեզ մոտ:
Հայրս հիվանդ ե, Ֆյոդորը մաղձոտ, յես... Նու, յես ի՞նչ նշանա-
կություն ունեմ քեզ համար... Ժամանակ եմ խլում, խախտում
եմ քո աշխատանքի սխտեմը:

ԿԱՇԻՐԻՆ. Իմ սխտեմը քավականաչափ ճկուն ե, վորպեսզի
ժամանակ գտնվի մեր հանդիպման համար, ձեր տուն գալու հա-
մար: Բանը զբանում չե: Ճիշտն ասած, Ֆյոդորն ինձ շփոթում
ե: Վերջին ժամանակներս նա մի տեսակ փոխվել ե դեպի ինձ,
նույնիսկ հրաժարվում ե իմ ոգնությունից:

ԳԱԼԻՆԱ. Տրամադրությունն ընկած ե և դիվահարում ե:
Ուշադրություն մի դարձրու: Մենք կարող ենք նրան կարեկ-
ցել, ոգնել, բայց պարտավոր չենք նրա հետ միասին տխրել:

ԿԱՇԻՐԻՆ. Այդ բոլորը ճիշտ ե: Սակայն տղան մեղք ե:

Դուռը ծեծում են: Մտնում ե ՍԱՎԻԶԸ:

ՍԱՎԻԶ. Բարև:

ԳԱԼԻՆԱ. Բարև:

ՍԱՎԻԶ. Ի՞նչպես ե մեր հիվանդը:

ԳԱԼԻՆԱ. Վատ ե, շատ վատ: Մարդկանց ներկայությամբ նա
կատակում ե, զվարթանում, սակայն իրավես խիստ տանջվում
ե: Չի կարողանում հաշտվել այն մտքի հետ, վոր կաթվածը
խփեց զհիվանդումից առաջ:

ՍԱՎԻԶ. Դե, իհարկե:

ԳԱԼԻՆԱ. Բայց ի՞նչ անել: Ինչպե՞ս ոգնել, յերբ բժշկությունն
անգոր ե:

ՍԱՎԻԶ. Ահա հենց դրա համար ել յես յեկել եմ:

ԳԱԼԻՆԱ. Դուք դեմ չե՞ք լինի, յեթե ընկեր Կաշիրինը մասնակցի մեր խորհրդակցութեանը:

ՍԱՎԻԶ. Խնդրեմ: Ուրախ կ'լինեմ: Յես հիշում եմ մեր վերջին գրույցը: Միանգամայն ուսանելի դասախոսութեան՝ հին պրոֆեսորի համար:

ԿԱՇԻՐԻՆ. Ծաղրում եք:

ՍԱՎԻԶ. Ո՛ր, վոչ, ինչ եք ասում... Յես առհասարակ ոչտակար եմ համարում ձերունինների շփումը՝ յերիտասարդութեան հետ:

ԳԱԼԻՆԱ. Դրանից կարելի չե կարծել, վոր նախազօի մասին ընկեր Կաշիրինի յեզրակացութեանը ճիշտ ե դուրս յեկել:

ՍԱՎԻԶ. Այ, հենց այդ մասին մենք հիմա կխոսենք: Յես այսպիսի առաջարկ եմ անում. — ուսումնասիրելով ձեզնից ստացած լրացուցիչ նյութերը, յես խորհրդի նիստ կհրավիրեմ, ինքս կգեկուցեմ, մտքերի փոխանակութեան կունենանք և այդ բոլորը, մեր գրական վորոշման հետ միասին, կուղարկենք Ալեքսել Վասիլյեվիչին:

ԿԱՇԻՐԻՆ. Դուք խոսում եք գրական վորոշման մասին: Նշանակում ե, Սիրիբի կլիմայի փոփոխման իդեան Փանտազիա չե՞:

ՍԱՎԻԶ. Դժբախտաբար յես մեռում եմ իմ նախկին կարծիքին:

ԳԱԼԻՆԱ. Այ քեզ բան...

ՍԱՎԻԶ. Այս ժամանակամիջոցում յես մի քանի անգամ վերադարձա նախազօին, մանրամասնորեն ուսումնասիրեցի այն, բայց, յես հո չեմ կարող հասարակայնութեանը շփոթութեան մեջ ձգել: Գուրոսիլոն նվաճելու գաղափարը չափազանց հրապուրիչ ե: Գիտական խորհրդի կարծիքը հեղինակավոր ե, և յեթե մենք կեղծենք և գրական վորոշում ընդունենք, անսխալապես ենտուգիաստներ դուրս կգան, նախահաշիվներ կնհրկայացնեն, իսկ արդյունքը կլինի միայն եքսպերիմենտ, վորն ի վերջո կլինի վատնում: Ամբողջ աշխարհում խայտառակ կլինենք:

ԿԱՇԻՐԻՆ. Նշանակում ե ձեր առաջարկութեանն ուղղակի ֆիկցիոն յես Բուտաֆոբիա...

ՍԱՎԻԶ. Այո, բուտաֆոբիա, խաբեյութեան, կեղծիք, բայց սրբազան կեղծիք, հանուն մարդկային կյանքի փրկութեան:

ԳԱԼԻՆԱ. Յես ձեզ հետ միանգամայն համաձայն եմ:

ԿԱՇԻՐԻՆ. Դժբախտաբար յես այդ գործում տգետ եմ, բայց այնուամենայնիվ օփսոսում եմ, վոր ընկեր Չառովը հնարավորութեան չունի անձամբ գեկուցել: Բոլորովին այլ տպավորու-

թյուն և թողնում, յերբ հեղինակն ինքն և պաշտպանում իր
դադափարը, նոր մտքեր և պարզաբանում, համոզում և:

ՍԱՎԻԶ. Այդ բոլորը ճիշտ և, բայց հազիվ թե ինձ համողի:
Յես բավականաչափ գրագետ եմ Հյուսիսի դեպքերին հետևելու
համար: Ճարական գեներալներն ու նահանգապետները, Հյու-
սիսն իր թշվառ դրուժյունից դուրս բերելու առաջարկին հեզ-
նորեն պատասխանում եյին, վոր Սիբիրում Հոլֆշտրոմներ չեն
լինում: Վճիռ ապուշը կուզենա բևեռի բերանն ընկնել: Ճար-
կան այդ պոմպոզություններին յես ընկերանալ չեմ կարող: Յես հիա-
նալի հասկանում եմ, թե ինչ և իրենից ներկայացնում համա-
միութենական սոցյալիստները, վորն իր տարածությամբ հավասար
և Շվեդիայի, Նորվեգիայի և Ֆինլյանդիայի անտառներին՝ միա-
սին վերցրած: Հիանալի ծանոթ եմ Պեչորայի հարստություն-
ներին: Գիտեմ ինչ են խոստանում սեղ Արկտիկի կղզիները: Այդ
բոլորն ինձ համար հասկանալի չե: Կարճ ասած, հակառակ ցա-
րական պոմպոզությունների կարծիքի, բևեռի անպտուղ թվացող
հողը վարվում և: Այդպիսի չակերտավոր Հոլֆշտրոմի յես հավա-
տում եմ, բայց բառացի հասկացողությամբ, առանց չակերտների
Հոլֆշտրոմի՝ չեմ հավատում:

ԿԱՇԻՐԻՆ. Ափսոս:

ՍԱՎԻԶ. Ի՞նչ արած:

ԿԱՇԻՐԻՆ. Ափսոս, վոր Ալեքսեյ Վասիլյեվիչը չի կարող հա-
զես գալ իր գեկուցումով:

ԳԱԼԻՆԱ. Դա անմտություն և:

ԿԱՇԻՐԻՆ. Յերևակայում եմ, թե ինչպես կժողկի Հյուսիսը,
յեթե Չադովը վերացնի այդ չակերտները:

ԳԱԼԻՆԱ. Հորս՝ գեկուցումով հանդես գալու մասին խոսք ան-
գամ չի կարող լինել: Դա անմտություն և: Անտարակույս մահ
Չեր առաջարկը, Սերգեյ Միխայիլովիչ, միակ միջոցն և:

ՍԱՎԻԶ. Յեզ այդպես, վճռված և: Ալեքսեյ Վասիլյեվիչի հեզ-
ձեր վարած բանակցության արդյունքի մասին դուք ինձ կհայտ-
նեք: Չափազանց ուրախ կլինեյի, յեթե իմ սուտը կարողանար
թեթևացնել նրա տանջանքները:

ԳԱԼԻՆԱ. Շնորհակալություն, Սերգեյ Միխայիլովիչ ձեր ջերմ
վերաբերմունքի համար: (Սեղմում և ձեռք):

ՍԱՎԻԶ. Հաջողություն եմ ցանկանում: Յտեսություն: (Գր-
նում և):

ԳԱԼԻՆԱ. Պատկեր, այժմ ամբողջ հույսս քեզ վրա յե՛ր Դու վաս ճառախոս չես, աշխատիր մի լավ ձողովարանի հանուն բարի գործի, իսկ յես կաջակցեմ:

ԿԱՇԻՐԻՆ. (Մտալ) Հաղիվ թե այդ անհրաժեշտ լինի: Տրամադրութուն չկա, մեկ ել, այդպիսի «սրբազան կեղծիքի» հետ սկզբունքորեն համաձայն չեմ:

ԳԱԼԻՆԱ. Այդ յես անմիջապես քթիցդ իմացա:

ԿԱՇԻՐԻՆ. Այդ մասին յես ունեմ իմ կարծիքը: Դժվար թե դու համաձայնվես դրա հետ:

ԳԱԼԻՆԱ. Պատրաստ եմ լսել:

ԿԱՇԻՐԻՆ. Դու հիշում ես մեռնող կոմիսարի պատմութունը, վորին յես ազատեցի ավելորդ տանջանքներից:

ԳԱԼԻՆԱ. Հիշում եմ, բայց դա ի՞նչ ընդհանուր կապ ունի հորս հետ:

ԿԱՇԻՐԻՆ. Հայրդ նույնպես տանջվում է, ինչպես կոմիսարն էր տանջվում, միայն բարոյապես:

ԳԱԼԻՆԱ. Դրանով ի՞նչ ես ուզում ասել: Արդյոք տրամադիր չե՞ս նրան նույնպես...

ԿԱՇԻՐԻՆ. Դեռես խելքս վրաս է, վորպեսզի կարողանում պատմածս դեպքի և ներկա մոմենտի պայմաններն ու ժամանակը միմյանցից տարբերել: Յես միայն ցանկանում եմ խորհուրդ տալ հորդ, վոր նա հանդես գա իր զեկուցյուսով:

ԿԱՇԻՐԻՆ. Բայց դա նշանակում է մարդուն դեպի ինքնասպանութուն մղել:

ԿԱՇԻՐԻՆ. Նա վոչինչ չի կորցնի:

ԳԱԼԻՆԱ. Յես իրավացի եյի: Դու դաժան մարդ ես:

ԿԱՇԻՐԻՆ. Հայտնի չէ, թե մեղանից ով է դաժան. դու, վոր անմիտ տանջանք ես ցանկանում հորդ, թե յես, վոր ցանկանում եմ նրան ազատել դրանից:

ԳԱԼԻՆԱ. Բայց ինչո՞ւ: Ո՞ւմ է պետք այդ գործողութունը:

ԿԱՇԻՐԻՆ. Տարրերիակ է: Յես համոզված եմ, վոր նրա նախազիծը իրական է: Վորպիս հեղափոխական, վորպես բուլհիկ, նա պետք է միայն այդպես վարվի:

ԳԱԼԻՆԱ. Իսկ յես համոզված եմ, վոր դրանից բան դուրս չի գա: Զգազգուցութունը նրան կսպանի հենց զեկուցման ակզբին: Վոչ յերկրին, վոչ էլ իրեն դրանից ոգուտ չկա: Կստացվի միայն գեղեցիկ, բայց անմիտ ժեստ, վորը կսպանի իմ ամենամոտիկ և

սիրելի մարդուն: Չէ՞ վոր նա ինձ համար յեղել ե վոչ միայն հայր, այլև մայր, վորից յես զրկվել եմ մանուկ հասակում: Ինչպիսի ուժ և տանջանք ե արժեցել նրա համար ընդհատակյա պայմաններում ինձ դաստիարակելը:

ԿԱՇԻՐԻՆ. Բայց այդ չի խանդարի նրան հանուն դորժի ռիսկի յենթարկել իր և քո կյանքը: Ինչո՞ւ չես ցանկանում նրա որինակին հետևել:

ԳԱԼԻՆԱ. Վորովհետև այն ժամանակ նրա ռիսկը իմաստ ունեք, իսկ այժմ...

ԿԱՇԻՐԻՆ. (Ընդհատելով) Նա վոչինչ չի կորցնի՝ քացի տանջանքից, վորը միայն արագացնում ե վախճանը:

ԳԱԼԻՆԱ. Յես կլարեմ վողջ ուժերս, վարպեսզի այդ տանջանքները չլինեն, մասնավանդ, վոր կա Սավիչի առաջարկը:

ԿԱՇԻՐԻՆ. Իսկ յեթե Չաղովը նրան չհավատմ:

ԳԱԼԻՆԱ. Այն ժամանակ... այն ժամանակ... նա կընտելանա այն մտքին... և ընդհանրապես կտեսնենք:

ԿԱՇԻՐԻՆ. Թանկագին ժամանակի կորուստ:

ԳԱԼԻՆԱ. Յեզ այդպես, դու չես ուզում ոգնել ինձ հորս համոզելու՝ Սավիչի առաջարկն ընդունելու:

ԿԱՇԻՐԻՆ. Չեմ կարող:

ԳԱԼԻՆԱ. Այդ դեպքում, յեթե դու ինձ գեթ մի քիչ, գեթ մի փոքր հարգում ես...

ԿԱՇԻՐԻՆ. Յես քեզ շատ եմ հարգում:

ԳԱԼԻՆԱ. Այդ դեպքում խոսք տուր, վոր դու հորս չես հայտնի այդ միտքը:

ԿԱՇԻՐԻՆ. Դժբախտաբար այդպիսի խոսք տալ չեմ կարող: Քանի նա կենդանի յե, պետք ե աշխատել փրկել նրա պրոնկտը:

ԳԱԼԻՆԱ. (Վախեցած) Այդ դեպքում յես քեզ հետ... Այդ դեպքում յես... քեզ... Վոչ, դու այդ չես անի...

ԿԱՇԻՐԻՆ. Կանեմ:

ԳԱԼԻՆԱ. Նա իմ ամենամոտիկ մարդն ե... իմ հայրն ե:

ԿԱՇԻՐԻՆ. Ինձ համար նա կուսակցութեան անդամ ե: (Վեր ե կիցում):

ԳԱԼԻՆԱ. (ձ աճապարհք փակելով) Թույլ չեմ տա: Ն ա քնած ե:

ԿԱՇԻՐԻՆ. Լավ, յես հետո կանցնեմ:

ԳԱԼԻՆԱ. Յես առում եմ քեզ: Դու գազան ես: Մենք բաժանվում ենք Վորպես թշնամիներ:

ԿԱՇԻՐԻՆ. Իզուր: Յես մնում եմ քո ամենայնով բարեկամը:

ԳԱԼԻՆԱ. Յես քեզ տեսնել չեմ ցանկանում:

ԿԱՇԻՐԻՆ. Շատ ցավալի յե, բայց յես պետք է տեսնեմ ընկեր

Չարովին:

ԳԱԼԻՆԱ. Հեռացիր, յես հոգնել եմ:

ԿԱՇԻՐԻՆ. Գնում եմ, բայց շուտով կվերադառնամ (Գնում է):

ԳԱԼԻՆԱ. (Հետեվից) Ի՞նչ մարդ է: Ի՞նչ տարորինակ մարդ: Բայց, թերևս, նա իրավմցի յե: Պարզ և լուրջ է նայում իրերի վրա, իսկ յես նրա աչքում անպետք, ջղային տրիկին եմ: Իսկապես, չե՞ վոր նախագիծը յերկրին հարկավոր է: Ի՞նչ անեմ: Ձոհել թանկագին հորս... բայց բժիշկները հավատացնում են, վոր դա անմտությունն է հիմարությունն է, եքսպերիմենտն է, ավելորդ դոհարերություն: Վոչ: Թող Պավելն ինքն իր վրա եքսպերիմենտներ կատարի, իսկ հորս մոտ յես նրան չեմ թողնի: Սակայն ի՞նչպես անել դա: Ի՞նչպես արգելել: (Գիշ մտածելով) Գոռա: Հաստատ միջոց (Թախծոս) Բայց չե՞ վոր այդ դեպքում Պավելը կզարարի մեզ այցելել: Ի՞նչ անել: (Հառաչելով): Թող: Հայրս ինձ համար ավելի թանգ է (Հեռանում է):

ՆԻԿԻՏԻՆ. — (Մտնում է, նայում է չորս կողմը) Ահա և դեղը: (Երբ սեղանին է դնում) Անմիջապես ուղեղս կթարմացնի: (Բաժակը լեցնում է յեվ խմում) Հիանալի դեղ է: (Խմում է յերկրորդ բաժակը) Լավ է: (Մտածելով) Մի քանի կաթիլ ևս չընդունեմ: (Ուզում է յերրորդ բաժակը լեցնել, բայց փայերի ձայն լսելով, զերբ քազցնում է սեղանի տակը):

ԳԱԼԻՆԱ. Դեղը բերեցի՞ր:

ՆԻԿԻՏԻՆ. Բերեցի:

ԳԱԼԻՆԱ. Խմեցի՞ր:

ՆԻԿԻՏԻՆ. Խմեցի:

ԳԱԼԻՆԱ. (Յերկար նայելով Նիկիտինի աչքերի) Տարորի-

նակ է:

ՆԻԿԻՏԻՆ. Ի՞նչն է տարորինակ:

ԳԱԼԻՆԱ. Աչքերդ փայում են: Յեվ սպիրտի հոտ է գալիս:

ՆԻԿԻՏԻՆ. Դեղը սպիրտով է պատրաստվում:

ԳԱԼԻՆԱ. Այդպես... այդպես... (Հայացավ վարձում է չորս կողմը):

ՆԻԿԻՏԻՆ. Ի՞նչ է պատահել: Ի՞նչ ես չոպել կոկորդիս, ի՞նչ ես վորոհում:

ԳԱԼԻՆԱ. Իսկ սա թ'նչ ե: (Շիբր ցույց ցալով):

ՆԻԿԻՏԻՆ. Նարզան:

ԳԱԼԻՆԱ. Իու նորից սկսել ես խմել: Սատանան գիտե, թե դա ինչ ե: Ինձ ձանրացրել ե դա: Յես ոչարտավոր չեմ քո վայրենու-
թյունները տանել:

ՆԻԿԻՏԻՆ. Գալինա, յեթե դու զգայիր իմ վիշտը, կհասկանայիր:

ԳԱԼԻՆԱ. Հասկանում եմ, բայց յես գիտեմ նաև, վոր դու խիստ համառ եյիր, յերբ հակառակում եյիր սովորելուն, և նույնքան համառ ես՝ յերբ սկսել ես սովորել: Ահա հայրս, իրոք վորդերգա-
կան դրության մեջ ե: Յես պատրաստ եմ իմ ամբողջ վորքերի կյանքը տալու, միայն թե յերկարի նրա կյանքը: Իսկ դու առողջ տղա յես և տառապում ես քո սեփական անզուսպ բնավորություն-
նից, վորից տանջվում եմ և յես:

ՆԻԿԻՏԻՆ. Իսկ քեզ սվ ե ստիպում տանջվես իմ պատճառով:

ԳԱԼԻՆԱ. Մթթե դու կարծում ես, վոր հեշտ ե և հոճելի տարել մի մարդու հետ, վորը միշտ մռայլ և, անհամբույր, ճնշիչ: Յերբեմն ինձ թվում ե, վոր իմ գլխի վերևը վոչ թե առաստաղ ե, այլ սև ամպ: Յես այդ չեմ ցանկանում: Ինչո՞ւ: Ամուսնությունն ինձ համար իդեա չե, նպատակ չե և յես չեմ ուզում, վոր ամուս-
նությունն անդրադառնա իմ աշխատանքի վրա: Զգաստացիր:

ՆԻԿԻՏԻՆ. Այդ նշանակում ես անբովել, մաքրվել և Պավելի խոր-
հըրդի համաձայն՝ Ֆիզկուլտուրայով զբաղվել, իսկ բժշկի խորհր-
դով՝ մի տարով դադարեցնել ուսումը: Իա նշանակում ե ժպիտը շրթունքներիս նստեմ անցաթղթերի քնդանի մտա: Իսկ կյանքն այդ ժամանակամիջոցում էլ ավելի առաջ կանցնի, իսկ յես այդ ժամանակամիջոցում էլ ավելի յես կմնամ: Վոչ: Յես պարագմունքը չեմ ընդհատի: Կհարկազրեմ ինձ, կլարեմ բոլոր ուժերս, մինչև գիտակցությունս կորցսելը:

ԳԱԼԻՆԱ. Իսկ յեթե...

ՆԻԿԻՏԻՆ. Նու, ինչ արած... մեռնելու յենք: Ի՞նչ ենք կորցնում: Վոչ հասարակական կյանք, վոչ անհատական: (Տրտում կախ ե զցում գլուխը: Կարև պառկա):

ԳԱԼԻՆԱ. (Անզգնակամ) Ձեռյա, սիրելիս, ինչո՞վ կարող եմ ոգնել քեզ:

ՆԻԿԻՏԻՆ. (Իյուխը բարձրացնում ե, վերցնելով Գալինայի ձեռքը) Գալինչկա, ասա ինձ ճիշտը, առանց թագցնելու, Պավելը վորդեա տղամարդ դճւր ե դալիս քեզ:

ԳԱԼԻՆԱ. (Շփոթված) Դուք ե գալիս:

ՆԻԿԻՏԻՆ. (Ձեռք բաց քողնելով) Այդպես:

ԳԱԼԻՆԱ. Բայց վորպես մարդ յես նրան առում եմ:

ՆԻԿԻՏԻՆԸ գարմացած բարձրացնում ե գլուխը:

ԳԱԼԻՆԱ. Վորպես ապացույց, դադարեցնում եմ իմ ծանոթութունը նրա հետ: (Հազմուեք գալելի վ): Յես դեմ չեյի լինի, յեթե նա բարրովին դադարեր մեր տուն հաճախել:

ՆԻԿԻՏԻՆ. Ինչո՞ւ:

ԳԱԼԻՆԱ. Վորովհետեւ յես նրա մասին մնում եմ նույն ահա կարծիքին, ինչ կարծիքի եյի ծանոթանալու որը (Արագ օւռ ե գալիս յեվ եռանում):

ՆԻԿԻՏԻՆ. (Հետեվից) Ձեռ հասկանում: (Մտածկոտ) Այստեղ ինչ վոր բան կա... (Իծվառարյամբ ուռադուրյունը կենսունացնում ե գրի վրա):

ԳԱԼԻՆԱ կանգնում ե աշխարհի մաս յեվ կայացր հառում երբ:

ՉԱԴՈՎ. (Աչքեր բացալով) Ի՞նչ յես, Գալոչկա:

ԳԱԼԻՆԱ. Յես եմ, հայրիկ: Ձանձրանում ես:

ՉԱԴՈՎ. Վոչ, այնքան ել չե... Գլուխս կանոնավոր վիճակում ե, միաքս պարզ, իսկ դա մի բան նշանակում ե:

ԳԱԼԻՆԱ. Իսկ յես հաճելի նորութուն պիտի հայտնեմ քեզ:

ՉԱԴՈՎ. (Հեզմանալով) Հաճելի նորութունները հաճելի յե լսել:

ԳԱԼԻՆԱ. Սավիչն եր յեկել: Շատ յփոթված եր: Լրացուցիչ նյութերն ստիպիլ ե նրան խորը մտածել քո նախազօծի վրա ե ըստ եյության հնահատել այն: Կարճ ասած, նա խնդրում ե, վոր թույլ տաս իրեն, քո փոխարեն հանդես գալու գիտական խորհրդում, խոստանալով պաշտպանել նախազօծը նույն վճարակա նությամբ, ինչպես դու կպաշտպանեյիր: Նիստի արդյունքի ճիշտ սղազիրը կուղարկի քեզ:

ՉԱԴՈՎ. (Բամիժաղով) Այդպես, այդպես... Գալոչկա, հիշում ես, յերբ դու փոքրիկ եյիր և համառութուն եյիր անում, յես քեզ համար հետաքրքիր հեքյաթներ եյի հորինում և...

ԳԱԼԻՆԱ. Դրանով ի՞նչ ես ուզում ասել:

ՉԱԴՈՎ. Այն, վոր իմ տարիքի յերեխաները հեքյաթներ չեն հավատում:

ԳԱԼԻՆԱ. Հայրիկ, ինչպէս չես ամաչում: Ազնիվ խոսքով յերդ-
վում եմ, վոր Սովիչը յեկել եր:

ՉԱԴՈՎ. Ճիշտ ե, վոր յեկել եր, հավատում եմ, վոր այդ հե-
քայթի հեղինակութունը պատկանում ե նրան, իսկ ցուցա-
դրումը՝ քեզ:

ԳԱԼԻՆԱ. (Կրկին վերավորված զգալով իրեն) Յես խորագիս
վերավորված եմ:

ՉԱԴՈՎ. Ինչից: Այն պատճառով, վոր չհաջողվեց ինձ խաբել:
Իսկ յես ահա, չեմ նեղանում: Ընդհակառակը, յես շատ զպացված
եմ ձեր դավադրութունից:

ԳԱԼԻՆԱ. Բայց ի՞նչն ե քեզ իրավունք տալիս կասկածելու իմ
անկեղծությանը:

ՉԱԴՈՎ. Բո աչքերը, իմ սիրելի աղջիկս, քո աչքերը: Չե վոր
յես բավականաչափ ուսումնասիրել եմ նրանց:

ԳԱԼԻՆԱ. Յես քեզ հավատացնում եմ...

ՉԱԴՈՎ. Իզուր ես հավատացնում: Յեթե յես հնարավոր
ություն ունենայի հանդես գար, յես նիստին մասնակցելու
կերավորելի կուսակցական այն ընկերներին, վորոնք իրենց գործ-
նական ընազդով ալելի լավ կհասկանային ինձ, քան իմ գիտա-
կան ընկերները: Նրանց կարծիքներն իսկապես կշարժեյին գիտա-
կան խորհրդի ուղեղը: Յես ամեն ջանք գործ կդնեյի Գալիլեյի
նման ապացուցելու, վոր Կուրոսիլոն այնուամենայնիվ կզառնա
խորհրդային:

ԳԱԼԻՆԱ. Բավական ե: Դառնանք ուրիշ նյութի:

ՉԱԴՈՎ. Դառնանք: Ասա ինձ, Գալոչկա, դու յերբեք մտածե՞լ
ես մահվան մասին:

ԳԱԼԻՆԱ. Խոսք չունեմ, շատ ուրախ նյութ ե:

ՉԱԴՈՎ. Թե՛ այդ նյութով զբաղվում են ինձ նման պարապ
մարդիկ:

ԳԱԼԻՆԱ. (Բարկացած) Յես նման հիմարություններով զբաղ-
վելու ժամանակ չունեմ:

ՉԱԴՈՎ. Իսկ յես, ահա, կրեմատորիայի շեմքին՝ զբաղվում ես
այդ հարցով: Յեթե ինձ տանջեր այն գիտակցությունը, վոր ինձ
հետ միասին մահանալու յե նաև իմ նախագիծը, յես միանգա-
մայն կհամակերպվեյի հաշմանդամի վիճակին: Բանի դեռ միտքս
պայծառ ե և կարող եմ հետեւել աշխարհի անց ու գարձին, յես
չեմ ցանկանում մեռնել:

ԳԱԼԻՆԱ. (ձշում է) Տեսա՞ք...

ՉԱԴՈՎ. Ի՞նչ է նշանակում այդ անորոշ «տեսաքը»...

ԳԱԼԻՆԱ. Դա վերաբերում է Կաշիրինին: Նրան թվում է, Վոր դու ալ կերպ ես նայում կյանքին:

ՉԱԴՈՎ. Ավելին կասեմ. յեթե նույնիսկ կաթվածից միայն մի աչքս առողջ մնա, վորպեսզի աշխարհը տեսնեմ, և միայն մի ախանջս՝ նրա հնչյունները լսելու, նույնիսկ այդ դեպքում յես չեյի հրաժարվի կյանքից:

ԳԱԼԻՆԱ. Բռնվո, բռնվո: Այ, դրա համար յես քեզ սիրում եմ: Այ, դա յես հասկանում եմ: Վոչինչ, ծերուկ, վոչինչ, մենք դեռ կապրենք: Այդ մասին յես յերաշխավորում եմ:

ՉԱԴՈՎ. (Ընկնված ձայնով) Իսկ նախազբժն ինչպես:

ԳԱԼԻՆԱ. Չեք քաշիր քո այդ նախազծից: Խորհրդային իշխանությունն առանց նրա յել կապրի: Ե՛սպես ել համառ ծերուկ:

ՉԱԴՈՎ. Խնդրում եմ, ինձ անկողին դցիր: Չանձբացա սիշայի դերում լինելուց և ինքս ինձ ման ածելուց:

ԳԱԼԻՆԱ. Ֆեդյա, յեկ այստեղ: (Ֆեդյան մտնում է) Ոգնի՛ր հայրիկին անկողին պառկեցնելու:

Զգուշությամբ փոխադրում են ամկողնու վրա: ՆիկիՏինն աշխատելով ՉԱԴՈՎԻՆ չնայել, արագ գնում է իր սենյակը:

ՉԱԴՈՎ. Ի՞նչ է պատահել նրան: Ինչո՞ւ յի այդպես մռայլ: Յեկ լաքի հոտ է գալիս:

ԳԱԼԻՆԱ. Տխրում է, անգիր է անում, նույն պատմությունն է...

ՉԱԴՈՎ. Իդուր: Վատ է սեփական բնավորության գոհը լինելը: Վատ է: Յեթե ձիշտն ասենք, յես իրավունք չունեմ գանդատվելու, յեթե անգամ վաղն իսկ ինձ կաթված խփի: Իմ ընկերներից քանի քանիսը վոհվեցին աքսորում և բանտերում՝ հեղափոխության մասին յերազելով, իսկ յես յերջանկություն ունեցա տասնչորս տարի ապրել և տեսնել հեղափոխությունը, բայց այնուամենայնիվ, անշնորհակալ եմ, ազահ եմ, դեռ եյի ուզում եմ ապրել...

ԳԱԼԻՆԱ. Միայն մի բորբոքվիր: Հանգիստ: Անցնենք ուրիշ նյութի:

ՉԱԴՈՎ. Դարձյալ ուրիշ նյութի... Դու շատ խիստ գրաքննիչ ես: Նյութն ինքդ ընտրիր:

ԳԱԼԻՆԱ. Լավ: Յեո, ահա ինչ նյութ եմ ընտրում: Յես ուզում եմ խնդրել քեզ, վոր կաշիրինին չընդունես:

ՉԱԴՈՎ. Ինչո՞ւ:

ԳԱԼԻՆԱ. (Հուզվումենք զսպելով) Վորովհետև... Հետո մանրավան կգամեմ:

ՉԱԴՈՎ. Հըմմ... Այնքան ել հարմար չե: Յես պատճառ չունեմ, ընդհակառակը, յես միշտ ուրախ եմ նրան տեսնելու:

ԳԱԼԻՆԱ. Դա միայն ինձ է վերաբերում:

ՉԱԴՈՎ. Անձամբ քեզ: Հըմ... Հասկանում եմ... Հասկանում եմ: Այդ դեպքում արդեն խոսք լինել չի կարող: Հպատակվում եմ: Բայց ինչպես արգելել: Հո չի կարելի ասել — հաճեցեք հեռանալ այտանդից:

ԳԱԼԻՆԱ. Գրեթե նրան, մի բան հորինիր, թե քեզ վատ ես զգում և վոչ վոքի չես ընդունում... Մի խոսքով, մի բան հնարիր: Չե՞ վոր դու հնարիմաց մարդ ես:

ՉԱԴՈՎ. Լավ: Մի բան կհորինենք:

ԳԱԼԻՆԱ. Այդ տոմսը ինքս կտամ նրան... կուղարկեմ:

ՉԱԴՈՎ. Ավելի լավ չի՞ դռանը փակցնել, ինչպես արվում է բյուրոկրատական հիմնարկում:

ԳԱԼԻՆԱ. Չեմ առարկում:

ՉԱԴՈՎ. Հիանալի: Թուղթ տուր:

ԳԱԼԻՆԱ. (Ահապարտանով sw իս և քանաֆ, բուղթ) Միայն շուտ գրիր, թե չե հանկարծ կարող ե գալ:

ՉԱԴՈՎ. Ինչ մի այնպիսի բյուրոկրատական բան գրեմ: «Առանց ղեկուցման ներս չմտնել»... Վոչ, դա հնացած է: «Վարիչը սաստիկ հարբած է: Ընդունելութուն չկա»:

ԳԱԼԻՆԱ. (Անհամբեր) Առանց կատակի: Գրիր, գրիր:

ՉԱԴՈՎԸ գրում է:

ՆԻԿԻՏԻՆ. (Իր սենյակում) Բան դուրս չի գալիս: Տասն անգամ նույն տողը կարդում եմ, բայց վոչինչ չի մտում հիշողությանս մեջ, (տեսում է գիրքը) Ժանտախտ... (Մի ումպով խմում է ռեի մեջ մնացած օղիկ):

Առանց դուր ծեծելու մտնում է ՊԱՎԵԼԸ:

ԿԱՇԻՐԻՆ. Բարև, Ֆյոդոր:

ՆԻԿԻՏԻՆ. (Մուայլ) Բարև:

ԿԱՇԻՐԻՆ. (Նկատելով դադարի շրջը) Դու այս ի՞նչ ես անում:
ՆԻԿԻՏԻՆ. Ինչ եմ ընդունում:

ԿԱՇԻՐԻՆ. Թող հիմարություններդ:

ՆԻԿԻՏԻՆ. Առանց խնամակալի յուր կգնամ:

ԿԱՇԻՐԻՆ. Յես քեզ համար խնամակալ չեմ, այլ ընկեր և բարեկամ:

ՆԻԿԻՏԻՆ. Թող աստված ազատի մեզ այդպիսի բարեկամ-ներից:

ԿԱՇԻՐԻՆ. Դու հարբած ես:

ՆԻԿԻՏԻՆ. Այն, ինչ հարբածի լեզվին ե, նույնը լուրջ մարդու գլխու մե ե:

ԿԱՇԻՐԻՆ. Վոչ միշտ: Հարբածը հիմարի նման հաճախ հիմարություններ ե դուրս աալիս:

ՆԻԿԻՏԻՆ. Ինչ ես գլխիս շարունակ բարոյական քարոզներ կարդում: Դաստիարակ հո չեմ: Ուրիշի մտքերը հափշտակել, խելոք մարդու տեղ ես դրել քեզ: Դրողի ծնցը գնա:

ՉԱՒՈՎ. Ի՞նչ արմուկ ե այնտեղ: Ի՞նչ ե պատահել: Իմացիր:

ԳԱԼԻՆԱ. (Վազելով) Ի՞նչ ե պատահել:

ԿԱՇԻՐԻՆ. Դիվահարել ե մարդը:

ՆԻԿԻՏԻՆ. (Գլխաբեր ծածկելով) Կորեք բողբոջ: (Գնում ե դեպի գուռը):

ԿԱՇԻՐԻՆ. Ո՞ւր:

ԳԱԼԻՆԱ. Այդ դրությամբ:

ՆԻԿԻՏԻՆ. Խմելու յիմ գնում:

ԿԱՇԻՐԻՆ. (Ճանապարհը փակելով) Վոչ մի տեղ չեմ գնա:

ՆԻԿԻՏԻՆ. Իսկ քո ի՞նչ գործն ե:

ԿԱՇԻՐԻՆ. Վարկաբեկելով քեզ, դու վարկաբեկում ես կուսակ-ցությանը:

ԳԱԼԻՆԱ. Թող գնա:

ՆԻԿԻՏԻՆ. Թող գնա: Հենց այդ ել քեզ հարկավոր ե... Կրա հետ մենակ մնալ (Կաօրիքիմ) Թող:

ԿԱՇԻՐԻՆ. Չեմ թողնի:

ՆԻԿԻՏԻՆ. Թող:

ԿԱՇԻՐԻՆ. Ֆյոկա, հանդիստ: Յերե ուշքի գաս, կամաչես:

ՆԻԿԻՏԻՆ. Թող:

ՉԱՒՈՎ. Չավակներս... Չավակներս... Չեն լսում:

ԳԱԼԻՆԱ. Բաց թող նրան: Հիվանդ կա այնտեղ:

ՉԱԴՌՎ. Ի՞նչ ե պատահել այնտեղ: (Ուժ ե գործ դնում վե կենտրոն):

ՆԻԿԻՏԻՆ. Ե՛ր, (Հարձակվում ե Կաթիրիքի վրա):

Կպում եմ: ԿԱՇԻՐԻՆԸ ՆԻԿԻՏԻՆԻՆ ԱՅՆՈՒՄ Ե ԲԱԳՈՆԳԻ ՎՐԱ:

ԳԱԼԻՆԱ. Դագարեցեք: Ի՞նչ եք անում: Պնվել:

ԿԱՇԱՐԻՆ. (Նիկիտինին բազմոցին սեղմելով) Հանգիստ: Կհապեմ:
ՆԻԿԻՏԻՆ. (Ռիմադրելով) Բաց թող, կսպանեմ:

ՉԱԴՌՎԸ դժվարությամբ բարձրանալով, վտար քարը տալով յեկ առողջ մեռնող աքոսները բռնելով, մտածում ե նրանց:

ՉԱԴՌՎ. Ընկերներ... (Ազնուկն ընդհատվում ե) Այդ ի՞նչ դիտարկում եք:

ԿԱՇԻՐԻՆԸ բաց ե բողբոսում ՆԻԿԻՏԻՆԻՆ, վորը վեր կենտրոն, դժվարությամբ շեշում ե շիրտված դարձնելով զուխը:

ԳԱԼԻՆԱ. (Բացադիտելով) Դու ինչ՞նչ յես վեր կացել: Նստիր: (Նստեցնում ե հուր):

ՉԱԴՌՎ. Ի՞նչ առիթով եք վեճը:

ԳԱԼԻՆԱ. Նա ըստըրովին խելքը կորցրել ե: Առաջնությունն ե անում: Պանդուս ե:

ՉԱԴՌՎ. Իզուր: Փորձը ցույց ե տվել, վոր խանդն անմիտ ե աննպատակ բան ե, և, բացի դրանից, Գալինան թեպետ քո կիսնն ե, բայց քո մասնավոր սեփականությունը չե:

ՆԻԿԻՏԻՆ. Կորեք:

ՉԱԴՌՎ. Մի շարունակիր, Յեգյա, ամեն ինչ պարզ ե:

ՆԻԿԻՏԻՆ. Յեթե քեզ իմ ներկայությունը հաճելի չե, կառիք չկա վոր դու գնաս, յես ինքս կհեռանամ:

ԳԱԼԻՆԱ. Մենք ել կհեռանանք: Պավել, ոգնիր ինձ: (Չաղովի քվեից բռնած ճանում եմ: Գալինան հուրը նստեցնում ե բազմոցի վրա) Նու, ի՞նչ կասեք: Ի՞նչ ե պատահել նրան:

ՉԱԴՌՎ. Եմոցիայի կուտակում: Իր համար ել հեշտ չե:

ԳԱԼԻՆԱ. Ինչ՞ով ե վերջանալու այս ամենը: Զգում եմ, վոր վատ բան ե լինելու:

ԿԱՇԻՐԻՆ. Այո, վատ ե:

Այդ միջոցին ՆԻԿԻՏԻՆԸ, անկողնից վեր ցատկելով, պատից վերցնում ե տարճանակը, մտածում ե միջնորմին: Կանգնում ե դռան մոտ, մտախոն:

ՉԱԴՌՎ. Հետաքրքիր ե, ի՞նչ ե անում նա այնտեղ:

ԳԱԼԻՆԱ. Կարձեա մեկը կանգնած ե դռան յետով:

ԿԱՇԻՐԻՆԸ մտածում է դառնք:

ԻԱԼԻՆԱ. Հարկավոր չե, Պավել, հարկավոր չե:

Երեկոցին, յետ բաշխով դռնից, շտապ դուրս է փախչում սենյակից:

ԿԱՇԻՐԻՆ. (Գալիմեային կամացուկ ձեռացնելով) Դատարկ բան
է: (Դուռը բացում է) Մարդ չկա:

ԻԱԼԻՆԱ. (Նայելով սենյակը) Դնացել է: Անհանգիստ եմ:

ԿԱՇԻՐԻՆ. Վոչինչ, թարմ ողում ուշքի կգա:

ԻԱԼԻՆԱ. Պավել, գիշերը մնա մեկ մոտ: Ահա այստեղ, բազմոցի վրա: Հայրիկ, կարե՞լի յե:

ՉԱԴՈՎ. Չեմ առարկում, թե չե կվերադառնա ու կսկսի աղմկել, իսկ յես վատ բռնցքամարտիկ եմ:

ԿԱՇԻՐԻՆ. Ուրախու՞թյամբ:

ԻԱԼԻՆԱ. (Նրան մի կողմ ցանելով) Միայն խնդրում եմ, այսօր նախագծի մասին խոսք չբանալ, այլապես ամբողջ գիշերը նա չի հանգստանա: Դուքը նրա համար միակ դեղն է: Աղաչում եմ:

ԿԱՇԻՐԻՆ. Խոստանում եմ՝ մինչև պվելի հարմար առիթի:

ԻԱԼԻՆԱ. Մենք դեռ կտեսնենք: Դագան: (Հոր տիպեցիին) Իսկ տոմսը մենք վաղը կփակցնենք:

ՉԱԴՈՎ. (Բնծիծաղով) Դու գիտես:

ԻԱԼԻՆԱ. (Բարձր) Այդ տեսարանը քեզ շատ հուզեց:

ՉԱԴՈՎ. Ամենակին Ընդհակառակը, նա իմ մեջ վճառկան միտք առաջացրեց. պարզվում է, վոր յես ընդունակ եմ քայլել սենյակում: (Կիսաբարձրաձայնով) Ահազատիկ... (Քայլում է) Ա՛ջ... Դուրս է գալիս, վոր յես աջ թեքում ունեմ: Ա՛ջ: Թեկուզ դեմոնստրացիայի կարող եմ դուրս գալ:

ԻԱԼԻՆԱ. (Ուժով նստեցնում է) Նստի՛ր, ծեք չարածճի: Նստի՛ր:

ՉԱԴՈՎ. Թույլ աուր քիչ էլ վարժու՞թյուն անեմ:

ԻԱԼԻՆԱ. Նստի՛ր:

ՉԱԴՈՎ. Սա ցույց է տալիս, վոր յես դեռևս կիսով չափ առողջ եմ: Այստեղից հարց է առաջ գալիս, յեթե յես կարող եմ սենյակում քայլել, ուրեմն ինչո՞ւ չքայլել, ասենք, մինչև գիտական խորհուրդը:

ԻԱԼԻՆԱ. Ինչե՞ր ես ասում:

ՉԱԴՈՎ. Յեթե յես կիսով չափ առողջ եմ, մի՞թե այդ կեսը չի բավականացնի զեկուցման համար:

ԻԱԼԻՆԱ. Խելքդ տե՞ղն է:

ՉԱԴՈՎ. Յես հարց եմ տալիս, յեթե յերրորդ վճռական հար-
վածն անխուսափելի յես, ապա ինչո՞ւ այդ հարժածը չստանամ,
ասենք, զեկուցումից հետո:

ԳԱԼԻՆԱ. Բայց քո այդ դրուժյան մեջ և Ղազարգիւ վիճա-
կում, դա կարող ե պատահել նաև զեկուցումից առաջ: Ի՞նչ
միտք կա:

ՉԱԴՈՎ. Յես կորցնելու վաչինչ չունեմ, բայց նվաճել կարող
եմ տաք հոսանքը:

ԳԱԼԻՆԱ. Բայց դա անմտությունն է: Բժիշկը վճռականապես
հաժտադնում է, վոր կես ժամ ել չես դիմանա: Չեմ թողնի:

ՉԱԴՈՎ. Իմ սիրելի աղջիկ, թեպետ և յես քո հայրն եմ,
բայց քո մասնավոր սեփականությունը չեմ:

ԳԱԼԻՆԱ. Բայց չե՞ վոր դա ոխակ է: Դու գնում ես զեպի
հաստատ և աննպատակ մահը: Յես չեմ ուզում այդպես անժտորեն
կորցնել քեզ: Չեմ ուզում:

ՉԱԴՈՎ. (Առողջ ձեռքով վայլալիցով մտան) Հավատա ինձ,
աղջիկս, յես նույնպես չեմ ուզում քեզնից բաժանվել: Բնավ չեմ
ուզում, բայց ի՞նչ կարող եմ անել:

ԳԱԼԻՆԱ. Բայց չե՞ վոր դու նոր միայն ասում ելիր, վոր
պատրաստ ես ապրել մի ականջով և մի աչքով, միայն թե տես-
նես աշխարհը և լսես նրա հնչյունները:

ՉԱԴՈՎ. Դա վերացական է, իսկ իրականում վերջավորու-
թյունն անխուսափելի յես: Դամոկլյան սուրբ յեթե վոչ այսոր,
սակայն վաղն իջնելու յես իմ գլխին: Պետք է շտապել, շտապել:
(Վճռակամ) Վաղը չես մյուս որը հրավիրում եմ խորհուրդի նիստ:

ԳԱԼԻՆԱ. (Իրեն կարցած) Իմ բարի, իմ լավ Պավել, ոգնիլ
ինձ: Ի՞նչ ես կռճղի պես կանգնել ու լռում:

ԿԱՇԻՐԻՆ. Վոչ, ավելի լավ է յես նրան կոգնեմ:

ԳԱԼԻՆԱ. Ի՞նչ ես ուզում ասել դրանով:

ԿԱՇԻՐԻՆ Յես նրան զեկուցման տեղը կհասցնեմ:

ՉԱԴՈՎ. Կեցցես, Պավել, կեցցես:

ԳԱԼԻՆԱ. Դու չար վոզի յես:

ՉԱԴՈՎ. Գալուչկա, լսիր, դու պետք է հաղթահարես քո զգաց-
մունքները: Դու վախենում ես կորցնել ինձ, իսկ յես վախենում
եմ կորցնել տաք հոսանքը: Իմ վախն ավելի հիմնավոր է:

ԿԱՇԻՐԻՆ. Այդ վճիռը, ընկեր Չադով, յես վաղուց ելի սպա-
սում ձեզանից: Յես նույնիսկ ուզում եմ հիշեցնել ձեզ այդ մա-

սին, չնայած ձեր ազնկա դիմադրութեանը և ձեզ այցելելու արգելքին:

ՉԱԴՈՎ. Ահա թե ինչ...

ԿԱՇԻՐԻՆ. Գալինա, յես սկսում եմ կասկածել քո հեղափոխական լինելուն:

ՉԱԴՈՎ. Գալինա, խոստովանում եմ, քո համառութեանն ինձ ևս սկսում է տհաճութուն պատճառել: Չե՞ վոր յես քեզ դաստիարակել եմ զորպես հեղափոխականի, վորպես իմ իդեալական շարունակութեանը: Մի՞թե սեփականութեան ընթացքը հանդեպ այնպիսի անպետք մի ձերուկի, ինչպիսին յես եմ, քեզ համար վեղի թանգ է այն նախագծից, վորը կյանք է ներշնչելու տունդրաներին և տայգաներին, լույս ու ջերմութուն է տալու միլիոնավոր մարդկանց:

ԳԱԼԻՆԱ. (Շփարված) Այդ բոլորը յես հասկանում եմ, բայց...

ՉԱԴՈՎ. Ինչ «բայ» կարող է լինել: Յես այժմ զգացի, թե ինչպիսի պահպանողական ինստիտուտ է հանդիսանում ընտանիքը. (Միտնգամայն լուրջ) Գալինա, ահա քո առաջ դիլեմա. կամ ռիսկի յենթարկել հորդ կյանքը, կամ կորցնել այն, վորը յերկբին նոր, հարուստ յերկրամաս տալու հնարավորութեանն ունի: Յես պատասխանի յեմ սպասում:

ԳԱԼԻՆԱ. (Մտնելով սարված, խոնարհում է գլուխը նամառ նայվածքների հանդեպ: Լռված սպասողական պատգա: Խոր ընչիսվ, բարձրացնում է գլուխը) Դու յե՞րբ ես նշանակում նիստը:

ՉԱԴՈՎ. Վաղը չե՛ մյուս որը:

ԳԱԼԻՆԱ. (Դանդաղ մտնում է հեռախոսին յեվ վերցնում է հեռափողը) 5—44—43. պրոֆեսոր Մավիչին: Բարե յեզեք:

ԿԱՇԻՐԻՆ. Յես յես եմ վերցնում իմ ասածը:

ՉԱԴՈՎ. Իսկ յես չե՛յի կասկածում:

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

ՉՈՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ՉԱՌՈՎԻ ՉԱՅՆԸ. Այն է լավ, ինչ լավ է վերջանում:
ԿԱՇԻՐԻՆԻ ՉԱՅՆԸ. Չգուշ, գգուշ: Դուռը բացեք:

ԿԱՇԻՐԻՆԸ, ՉԱՌՈՎԸ, ՍԱՎԻԶԸ մտնում են սենյակ.

ՉԱՌՈՎ. (Ուրախ) Այնուամենայնիվ Հովֆշտրոմը լինելու չե
չյուսիրսում:

ԿԱՇԻՐԻՆ. Անմիջապես քնել:

ՉԱՌՈՎ. Այո... Այո... քնել:

ՍԱՎԻԶ. Ուրեկտիվորեն յես ցարական պոմպոզուրի դրության
մեջ ընկա:

ՉԱՌՈՎ. Նու, ինչու այդպիսի անհաճելի անալոգիա: Դատարկ
բան է: Այնքան էլ սարսափելի չէ: Բարձր բարձրացրեք: Ահա
այդպես: Շնորհակալություն: Դրսում դարուն է: Ամեն ինչ ծաղ-
կում է: Կյանքը մահ է ծնում: Մահը կյանք է ծնում: Հավիտե-
նական պերպետում մորելի: — Այդ բոլորն այդպես: Բայց չե
վոր իմ կյանքը դեռ չի սպառվել: Ինչո՞ւ ժամանակից շուտ մեռնել:

ՍԱՎԻԶ. Դա բնավ պարտադիր չէ: Դու կապրես:

ՉԱՌՈՎ. Չեմ առարկում: Բժիշկների քիթը կտարվեց: Յե՛վ
զեկուցումն է արվել, և՛ զեկուցողն է կենդանի: Իսկ Գալոչկա
անհանգստանում է: Չանգահարեյինք նրան:

ԿԱՇԻՐԻՆ. Չանգահարել եմ: Իսկույն կգա:

ՍԱՎԻԶ. Այո, դու կարող ես հանգիստ ապրել: Յես անձամբ
ամեն ջանք գործ կդնեմ, վորպեսզի քո նախագիծը մտնի մեր
գիտության ֆոնդը: Իմ մտքի յերկշտությունը հանգեալ քո նա-
խագծի թափի և հանդգնության՝ անուշադրության մատենեց

զլխավոր՝ ժանրաժանությունը: Յես նշանակությունն չափեցի
ժուտոններին, տաք քամիներով նրանց հաղենալուն, այն բանին,
վոր նրանք հավիտենական սառուցման վիճակում տաք ոգային
սյունի յեն վերածվում:

ԿԱՇԻՐԻՆ. (Ընդմիջելով) Ներողություն: Դիսկուսիան վաղուց
և վերջացել:

ՍԱՎԻԶ. Այո... այո... Ներեցիք: Յես միայն ուզում եմ ասել
հետևյալը. յես, հին գիտնական առնետս, միայն այժմ իսկապես
հասկացա, թե ինչ է նշանակում գիտության մեջ հեղափոխական
լինել, թե ինչպիսի խորը իմաստ կա այդ խոսքերում: Յես ինձ
առաջաճոր ժարդ եյի համարում, բայց իրականում դուքս յեկա
պահպանողական: Որչեկտիվորեն յես կարող եյի ֆուսսաբար դուքս
դալ: Ձզջում եմ, Ալեքսեյ Վասիլյեվիչ, մեղավոր եմ...

ՉԱԴՈՎ. Յե՛վ թող զմեզս պարտապանաց մերոց...

ԿԱՇԻՐԻՆ. Ամեն: Դրանով ել վերջացնենք: Հարկավոր է թույլ
տալ, վոր հորելյարը հանգստանա:

ՍԱՎԻԶ. Այո, այո: Յես բոլորովին մոռացության տվեցի, վոր
դու սոսեպլի հոգնած ես: Յես դարձյալ կզամ ձեզ մոտ:

ՉԱԴՈՎ. Անողայման: Միայն թե շատ ականջի յեռե չզցես,
յեթե ուզում ես ինձ դեռ ևս տեսնել այս աշխարհում:

ՍԱՎԻԶ. Մենք քեզ բաց չենք թողնի, չենք թողնի: Մնաք
բարով:

Գնում են հարեվան անյակ:

ԳԱԼԻՆԱ. (Վազելով ներս է գալիս) Հը, ի՛նչ կասեք:

ԿԱՇԻՐԻՆ. Ամեն ինչ կարգին է: (Նստն է աճում մնալ) Սպա-
տիր, թող հանգստանա:

ԳԱԼԻՆԱ. (Հոգնած բնկնում է արուի վրա, օպրում է պոր-
ֆելլը. զլխարկը) Ո՛Ֆ... այնպես եյի շտապում, հուզվում եյի: Իսկ
արտադրական խորհրդակցությունը, կարծես դիտավորյալ կեր-
պով, յերկարեց: Մերուկը յերկմը խոսեց:

ԿԱՇԻՐԻՆ. Յերկու ժամից ավելի: Սկզբում խոսում եր հան-
դիստ, ընդմիջումներով, ինչպես մենք նրան սովորեցրել եյինք.
բայց զեկուցման յերկորդ կեսին սկսեց շտապել, ձայնը խզվեց,
շունչը կտրվեց:

ՍԱՎԻԶ. Ծանր դրությունն եր, բայց վո՛չ մի կերպ չե՛ր կարելի
նրան կանգնեցնել:

ԳԱԼԻՆԱ. Իսկ արդյո՞հնքը: Արդյո՞հնքը:

ՍԱՎԻԶ. Միանգամայն դրական:

ԳԱԼԻՆԱ. Ինքը գո՞հ ե:

ԿԱՇԻՐԻՆ. Յերջանիկ ե:

ԳԱԼԻՆԱ. Նշանակում ե ձեր կասկածները, Սերգեյ Միխայիլովիչ, իզուր եյին:

ՍԱՎԻԶ. Մի ասեք: Յես խղճի խայթ եմ զգում: Չե՞ վոր իմ պատճառով Ալեքսեյ Վասիլյովիչը տառապեց, տանջվեց, իմ պատճառով թերևս տակասեց նրա կյանքի առանց այն ել կարճ սրերը: Հանցանքս քավելու համար այսուհետև յես իմ բախտը կտալում եմ նրա հախաղժի հետ:

ԳԱԼԻՆԱ. Շատ ուրախ եմ: Այժմ պետք ե աշխատել նրա համար ծայրահեղ հանգիստ պայմաններ ստեղծել:

ՍԱՎԻԶ. Յես անձամբ միշտ ձեր տրամադրության տակ եմ: Մշտապես կարող եք դիմել ինձ:

ԳԱԼԻՆԱ. Շնորհակալություն, Սերգեյ Միխայիլովիչ: Շատ ուրախ եմ, վոր հին բարեկամները հաշտվեցին:

ՍԱՎԻԶ. Յես ավելի ուրախ եմ, Յտեսություն: (Հրժեշտ ե ցալից յեվ գնում):

ԿԱՇԻՐԻՆ. (Փայտով) Հուսով եմ այժմ փոխած կլինես կարծիքդ իմ զազանության մասին:

ԳԱԼԻՆԱ. (Ձեռք պարզելով) Հաշտություն: Գժառությունից հետո—կրկնակի բարեկամություն:

ԿԱՇԻՐԻՆ. (Սեղմում ե պարզած ձեռք յեվ լեզու պահում) Շատ ուրախ եմ: Յես, բնատուրանում եմ, վերջերս շատ եյի առխորում:

ԳԱԼԻՆԱ. Միթե այդպիսի քնքուշ մանկիկը կարող ե ախրել: ԿԱՇԻՐԻՆ. Յերևակայիք:

ԳԱԼԻՆԱ. Ձեռքս բաց թող: Յավում ե: Իսկ յես շատ եմ վերավորել ձեզ:

ԿԱՇԻՐԻՆ. Գանգատվել չեմ կարող:

ԳԱԼԻՆԱ. Վոչինչ: Դա ոգտակար ե քեզ: Հարկավոր կգա:

ԿԱՇԻՐԻՆ. Շնորհակալ եմ ուշադրությանդ համար:

ԳԱԼԻՆԱ. Այտր ինչո՞ւ յես այդպես յերազական:

ԿԱՇԻՐԻՆ. (Հառաչում ե):

ԳԱԼԻՆԱ. Դուրս ե գալիս, վոր կարող ես նաև հառաչել: Դա նորություն ե:

ԿԱՇԻՐԻՆ. Ինձ հարկավոր է տեսնել Ֆյոդորին: Նա վերադառնալու է լինում:

ԳԱԼԻՆԱ. Գարեջրատանը: Ինչո՞վ է վերջանալու այդ բոլորը:

ԿԱՇԻՐԻՆ. Գալիս է: Քայլվածքից կարելի չէ վերջել, վոր հարբած է:

ՆԻԿԻՏԻՆ. (Չափազանց քնկնված, սափրված չէ, խոսում է ինքնիքին) Հետախուզու՞թյան ժամանակ ընկա սպիտակներին թիկունքը: Շկուրովցիները յեթե բռնեյին, կաշիս կմաշկեյին: Մի քանի որ գաղանի նման թագնվեցի յեղեգնուտի և մացառնեղի մեջ, բայց է այնպես այնքան հոգեմաշ չեք, ինչպես այժմ: Այն ժամանակ յես հուշս ունեյի մեքոնց մոտ ընկնել, հասնել նրանց, իսկ այժմ, վոչ մի հուշս, վոչ մի կերպ չեմ հասնի: Գնացքը հեռանում է, յես վազում եմ, ձայն եմ տալիս նրա յետեից, բայց չեմ հասնում: Կուլտուրան է պակասում: Ինչո՞ւ յեն այսքան դժգոհ եք հորինել: Ինչի՞ համար է այսքան դասագիրքը: Ավելի լավ չէր նախնական կոմունիզմը: Վոչ մի գիրք, վոչ մի թեորիս, վոչ մի ուսում:

ԿԱՇԻՐԻՆ. (Հեգհակաճ) Մեջքին գաղանի մորթի, ձեռքին դանակ:

ՆԻԿԻՏԻՆ. Կինը յեթե դավաճաներ, նախամարդ ամուսինը դադանակով գլխին կհասցնեք:

ԳԱԼԻՆԱ. (Նրա տնով, կարծես նրան համալիրաբար) Իսկ հիմա այդպես չէ: Ամեն բանի համար դադանակով ձեռքերին են խփում:

ՆԻԿԻՏԻՆ. Մարդիկ գյուտեր են անում, ստեղծագործում են, կլիմա յեն փոխում:

ԿԱՇԻՐԻՆ. Ափսոս չի՞ նստիլ քարանձավում, և վոտքով քիթը քչփորել: Վոխեցի՞ր դու, Ֆյոդոր: Մթթե ընկերներդ քեզ չեն ընդառաջել:

ՆԻԿԻՏԻՆ. Նու, յեթե յես այդպիսին եմ, ինչո՞ւ առաջ վզակոթիս չտվին:

ԳԱԼԻՆԱ. Այո, դա ճիշտ է:

ԿԱՇԻՐԻՆ. Կուսակցականի նման չես դատում: Լավ չէ:

ՆԻԿԻՏԻՆ. (Վզտալի ձայնով) Այո, դու իրավացի յես: Յես այլևս կուսակցական չեմ: Յես այլևս կուստոմա չունեմ:

ԳԱԼԻՆԱ. Ինչպե՞ս:

ԿԱՇԻՐԻՆ. Ի՞նչ ես արել կուստոմադ:

ՆԻԿԻՏԻՆ. Այսոր առաջնայան ինձ վերահսկիչ հանձնատուով
կանչեցին և տոմսի հետ միասին նազանս ել վերցրին:

ԳԱԼԻՆԱ. Ինչո՞ւ:

ՆԻԿԻՏԻՆ. Ողու պատճառով:

ԳԱԼԻՆԱ. Քանի՞ անգամ քեզ զգուշացրինք:

ԿԱՇԻՐԻՆ. Ի՞նչ ես մտածում անել սրանից հետո:

ՆԻԿԻՏԻՆ. Ձգիտե՛մ: Յեթի ֆրոնտ լինի, աշխատանք կըրա-
նեյի, գնդացիքով, հրացանով... ուր ուզես:

ԳԱԼԻՆԱ. Դու այսոր ճաշել ես:

ՆԻԿԻՏԻՆ. Ձգիտե՛մ: Չեմ հիշում: Դա կարևոր չէ:

ԳԱԼԻՆԱ. (Վեր կեցավով) Գնամ քեզ համար ճաշ պատրաստեմ:

ՆԻԿԻՏԻՆ. Նստի՛ր: Հարկավոր չէ: Կոկորդա բացի ողուց, վո-
չինչ չի գնում: Այո... ուր ուզես, հրացանով, ուռածով:

ԳԱԼԻՆԱ. Մի՛ բզավիր, ծեղրունուն կարթնացնես:

ՆԻԿԻՏԻՆ. Ներողություն: Ել չեմ անի: Փռուավոր ծերուկ ե:
Լավ աներ ե, բայց փնսան անպետք ե: Թեպետ յես այժմ ինչ
փեսա յեմ: Այժմ, Պավել, դու յես այդ կոչմանը ձգտում:

ԿԱՇԻՐԻՆ. (Ակնաբեկով զսայում ե Գալիմային, վորն ուզում եր
խոսել) Ձյոգոր, այդ մասին յես ուզում եմ քեզ հետ մեկ անգամ
ընդմիջտ լուրջ խոսել: Դու լսում ես ինձ:

ՆԻԿԻՏԻՆ. Լսում եմ... Լսում եմ...

ԿԱՇԻՐԻՆ. Վաղուց ուզում եմ, Բայց դու միշտ ել լուրջ չես
յեղել: Յես գնամ, իսկ դու պառկիր, քնիր, վորպեսզի լրջանա-
լուց հետո կարողանանք խոսել:

ՆԻԿԻՏԻՆ. Լավ: Միայն ինչո՞ւ գնաս: Յես կգնամ պատրզամբ,
կպառկեմ թարմ ողում: Ուզեղս հաշմանդամ եմ դարձրել (Գնում ե):

ԳԱԼԻՆԱ. Ի՞նչ ես ուզում ասել նրան:

ԿԱՇԻՐԻՆ. Ասա ինձ, Գալյա, դու սիրում ես նրան:

ԳԱԼԻՆԱ. Յես խղճում եմ նրան: Չնայած պակասություններ
ունի, բայց լավ տղա յե:

ԿԱՇԻՐԻՆ. Բայց խղճալ՝ չի նշանակում սիրել:

ԳԱԼԻՆԱ. Այո, դու իրավացի յես: Չգացումն անցել ե, իսկ
յերկուսին սիրել՝ հնարավոր չէ:

ԿԱՇԻՐԻՆ. Հը՞մ:

ԳԱԼԻՆԱ. Գուցե իմ անկեղծությունը դուր չի գալիս ընկեր
Կաշիրինին:

ԿԱՇԻՐԻՆ. Շատ ե դուր գալիս: Միայն թե...

ԳԱԼԻՆԱ. Խանդարում ե սխաեմք:

ԿԱՇԻՐԻՆ. Իմ սխաեմը վաղուց ե խանդարվել՝ քո շնորհիգ:

ԳԱԼԻՆԱ. Յեղ ափսոսում եք, միստըր:

ԿԱՇԻՐԻՆ. Դա իմ կամքն ե:

ԳԱԼԻՆԱ. Շատ հաճելի յի լսել: Այդ դեպքում ինչնձեմ ե բանը:

ԿԱՇԻՐԻՆ. Նբանում, վոր մեր մեջ ե Ֆյոդորը:

ԳԱԼԻՆԱ. Այո:

ԿԱՇԻՐԻՆ. Ինձ անհանգստացնում ե Ֆյոդորի վիճակը:

ԳԱԼԻՆԱ. Վոչ պակաս, քան ինձ: Յես կմնամ նրա բարեկամը:

ԿԱՇԻՐԻՆ. Այդ իսկ պատճառով ել մենք պարտավոր ենք ժտա-

ծել նրա մասին:

ԳԱԼԻՆԱ. Բայց ինչ կարող ենք անել մենք:

ԿԱՇԻՐԻՆ. Կա մի միջոց:

ԳԱԼԻՆԱ. Դաբձյալ ինչ վոր սոսկալի բան:

ԿԱՇԻՐԻՆ. Վոչ սոսկալի, այլ ծանր, և վոչ թե նրա, այլ ինձ

համար:

ԳԱԼԻՆԱ. Ասա, ասա: Յես ինչ վոր վատ բան եմ նախազգում

նաև ինձ համար:

ԿԱՇԻՐԻՆ. Յես կասկածում եմ, արդյոք դեպի քեղ ունեցած հարաբերությունը չի արդյոք այն կաթիլը, վորը լցնում ե նրա տառապանքի բաժակը: Յես չեմ ուզում, յես չեմ կարող այդպիսի հարգած հասցնել ընկերոջս, վորը ժամանակին այնքան շատ բան ե արել հեղափոխության համար:

ԳԱԼԻՆԱ. Դու ուզում ես... Դու վորոշել ես...

ԿԱՇԻՐԻՆ. Ձոհել զգացմունքներս՝ ընկերոջս փրկելու համար:

ԳԱԼԻՆԱ. (Ապօսմ նայում ե) Ի՞նչ... Ինչպիս...

ԿԱՇԻՐԻՆ. Յեթե յես այնպիսի յեսասեր լինեյի, ինչպես դու համարում ես ինձ, յես նման անձնազոհությունն չեյի անի:

ԳԱԼԻՆԱ. Այդ դեպքում դա քրիստոնեյությունն ե:

ԿԱՇԻՐԻՆ. Յես տվյալ դեպքին մոտենում եմ զխաղիկորեն:

ԳԱԼԻՆԱ. Յեղնելով քո բարոյագիտությունից, յես նույնպես պիտի զոհաբերեմ ինձ և ապրեմ նրա հետ, սիրելով ուրիշին:

ԿԱՇԻՐԻՆ. Սակայն կբխակազան մոմենտին ընկերոջը թողնել

նույնպես չի կարելի:

ԳԱԼԻՆԱ. (Ընկնված ձայնով) Նշանակում ե դու հեռանում ես

ինձնից:

ԿԱՇԻՐԻՆ. Այո:

ԳԱԼԻՆԱ. Յե՛րբ ես գնում:

ԿԱՇԻՐԻՆ. Վաղը:

Պատգա: Դեմեքք վիշտ եմ արտահայտում:

ՉԱԴՈՎ. Ձա՛վակներս, զա՛վակներս:

ԿԱՇԻՐԻՆ. Կանչում ե:

ԳԱԼԻՆԱՆ կարծես արքնացած, ցնցում է գլուխը: Վտտի յե յիջում, լուռ անցնում է ՉԱԴՈՎԻ սեկյակը:

ՉԱԴՈՎ. Բարե, աղջիկս: Բարե, սիրելի աղջիկս: Կարող ես շնորհավորել, քննությունը բանեցի:

ԳԱԼԻՆԱ. Լսել եմ, լսել եմ: Շատ ուրախ եմ:

ՉԱԴՈՎ. Տվե՛ք իմ կառքը: (նստում է իր սալլակի) **Յես ապացուցեցի, վոր իմ նախադիժը ցնորք չե, վոչ ել յերեակայություն, այլ հաստատ գործնականորեն իրագործելի թեորեաթիկ միտք:**

ԳԱԼԻՆԱ. Յես յերջանիկ եմ:

ՉԱԴՈՎ. Բայց դնչիկդ ինչ՞ու յե ալուպես տխուր: Չէ՞ վոր յես վողջ եմ, առույգ, դափնիներով պսակված:

ԳԱԼԻՆԱ. Հոգնել եմ, հուզվել: Դու ինչ՞ու ալուքան քիչ քնեցիր:

ՉԱԴՈՎ. Քու՛նս չի տանում:

ԳԱԼԻՆԱ. Այդ դեպքում գոնե լռեցիր: Չեկուցման ժամանակ բավականին խոսել ես արդեն:

ՉԱԴՈՎ. Չեմ կարող, խոսքերն իրենք իրենց դուրս են ժայթքում, ուզում եմ ցատկոտել մի վոտքով: Մատանան տանի, յեքիտասարդացումը յե՛րբ է ոեսալ փաստ դառնալու: Ինչ հիմար բան է մահը: Ո՛ւճն է հարկավոր նա:

ԿԱՇԻՐԻՆ. Միայն վոչ ձեզ:

ՉԱԴՈՎ. Ծիշտ ե: Թող գնա նրանց մոտ, ովքեր կանչում են իրեն, իսկ ինձ թող հանդիսա թողնի:

ԳԱԼԻՆԱ. Դու այդ մասին քիչ մտածիր:

ՉԱԴՈՎ. Այո, զավակս, մենք տանջանքներով ծնվում ենք, կապիտալիզմը տանջանքներով մեռնում է: Յե՛վ յե՛րբ նա վերջնահանապես մահանա, մարդկությունը նոր լողունդ կուռենա — մահ՝ մահին:

ԿԱՇԻՐԻՆ. Վատ չե:

ՉԱԴՈՎ. Յես համաձայն չեմ նրանց հետ, ովքեր կալաաացնում են, թե ապագայում մարդն այնպես առողջ կլինի է կյանքից գոհ, վոր մահվան կդիմավորի ժախտը դեմքին: Հիմարություն:

Ձեռ հավատում: յերջանկությունից վոչ վոր չի ուզի մեռնել: Այդպիսի տխմարներ այժմ ել չկան:

ԳԱԼԻՆԱ. Բավական ե:

ՉԱԴՈՎ. Հեղափոխությունից առաջ յես նույնպես անտարբեր եմ յեղել դեպի մահը, յիրք նստած եյի բա՛նտում: Գերազույն անտարբերություն հայտնաբերեց Ֆրունզեն, յերբ մահվան դատապարտված, նա սկսեց անգլիերին սովորել:

ԳԱԼԻՆԱ. Մենք գուցե անցնենք ավելի ուրախ նյութի:

ՉԱԴՈՎ. Յես իսկույն կվերջացնեմ: Յիրընմ յես մտանում եմ, վոր կանգնած եմ գերեզմանի յեղրին: Այդպիսի մտենտներից ինձ թվում ե, վոր կանգնած եմ հսկա յեռան գաղաթին, վորտեղից պարողորոջ յերևում են մեր շինարարության ուրվագծերը: Միայն վախկոտները, նրա թնդյունից խլացածներն են ականջները խցկում, կնճռոտվում, ե, աչքերը փակելով, չեն տեսնում հեռանկարները: Իսկ այդ թնդյունը կապիտալիստական ամբողջների հորսագույն ուրակոծումն ե և յերաժշտությունը, վորի հնչյունները վոչ մի յերաժշտագետ բնդունակ չե հաղորդելու:

ԳԱԼԻՆԱ. Հայրիկ, մեզ ագիտայիա մի արա: Մենք դրանում չենք կասկածում: Հանդատացիր:

ԿԱՇԻՐԻՆ. Այո, այո... Ընդմիջում անենք:

ՉԱԴՈՎ. Լավ: Ընդմիջում անենք: Իսկ ո՛ւր ե Ֆեդյան:

ԳԱԼԻՆԱ. Բնել ե և նույնն ե ցանկանում քեզ:

ՉԱԴՈՎ. (Համբուրում ե Գալիևային) Թանկագին աղջիկա: (Պաշտիկովին) Պավել, տուր ջո ֆիզիկուլտուրային ձեռքը:

ԳԱԼԻՆԱ. Ի՞նչ կարիք կա այդ ցերեմոնիային: Ձե՞ վոր դու նրան դարձյալ կտեսնես:

ՉԱԴՈՎ. Չգա ցմուքի առատությունից:

ԳԱԼԻՆԱ. (Կտտիքի բեկից փառելով) Դնանք, այլապես նա չի հանգստանա: (Բարկացած) Բնիք:

Անցնում են կից սեմյակը:

ԳԱԼԻՆԱ. Այսոր ինձ համար շատ տխուր որ ե, կարծես հուղարկափորություն լինի:

ԿԱՇԻՐԻՆ. Ո՛ւնն ես թաղում:

ԳԱԼԻՆԱ. Չեզ բուրբիդ, սատանաներ: (Անցնում ե Չաղովի սենյակով):

ԵԻԿԻՏԻՆ. Փողոցի աղմուկից արթնացա: Ի՞նչ եյիր ուղում ասել:

ԿԱՇԻՐԻՆ. Կարող ես լսել ինձ:

ՆԻԿԻՏԻՆ. Ինչ խելքս տեղն ե:

ԿԱՇԻՐԻՆ. Ֆեդյա, յես նկատում եմ, վոր իմ ներկայությունն այս առնը թունափորում ե յեթե վոչ քո ամբողջ կյանքը, համենայն զեպս, նրա զգալի մասը: Իրա օրատառը խանդն ե:

ՆԻԿԻՏԻՆ. Ո՞վ ասաց քեզ:

ԿԱՇԻՐԻՆ. Հարբած ժամանակ ուղղակի ասում ես, իսկ լուրջ վիճակում՝ թաղցնում ես: Այդպես ուրեմն, վորպեսզի ազատած լինեմ քեզ այդ բեռնվածությունից, վաղը յես հեռանում եմ այս տանից:

ՆԻԿԻՏԻՆ.՝ զարմացած, ակնապիշ նայում ե՞ ԿԱՇԻՐԻՆԻ աչքերին: Կտրն պաւազաւ:

ՆԻԿԻՏԻՆ. Ահա թե ինչ... (Պաւազա) Չոհարերություն:

ԿԱՇԻՐԻՆ. Ինչո՞ւ յես այդպես կարծում:

ՆԻԿԻՏԻՆ. Վորովհետեւ դու շատ ես սիրում Գալինային: Վարչափ ել թագցնում եյիր, բայց աչքի յեր ընկնում: Ուղղակի ասա՝ սիրում ես Գալինային:

ԿԱՇԻՐԻՆ. (Քիչ օփոքված) Միրում եմ... Սակայն մենք միայն բարեկամ ենք յեղել:

ՆԻԿԻՏԻՆ. Այդպես:

ԿԱՇԻՐԻՆ. Բայց քո վիճակն ինձ համար ավելի թանգ ե: Մեկնելով՝ մի բան եմ միայն պահանջում քեզնից. հանգստացիր ե նորից վերսկսիր ուսումը: Համբերիր մի տարի: Չե՞ վոր քեզնից ավելի ցած պատրաստականության տեր հազարավոր մարդիկ ապրում են լրիվ կյանքով: Ինչ շինարարության մեջ աշխատելու: Այդ հսկայական սրջնանոցում քեզ համար նույնպես աշխատանք կգանվի, վոզով կամբապնդվես: Մի՞թե մեր յերկրում քիչ տեղեր կան, ուր կարող ես ուժերդ գործադրել: (Նրկիսինը ստուգում ե գլուխը) Վերջապես գյուղ գնա, կոլխոզ գնա: Յե՞վ ընդհանրապես կարիք չկա այդ մասին խոսել քեզ հետ, ագիտացիա անել: Մի կորցնիր քեզ, Յյոզոր: Ով կորցնում ե իր զլուխը, նա կորցնում ե կյանքը: Պանիկայի մեջ մի ընկնիր: Մենք մեծ յերևությունների եպոխտայում ենք ապրում: Իրտես ինչ ե ասում քնկրը Չաղովը— յեթե կաթվածից ազատ մնա նրա միայն մի աչքը ե մի ափանջը, վորպեսզի տեսնի աշխարհն ու լսի նրա հնչյունները, այդ զեպքում անգամ նա կյանքից չի հրաժարվի: Իսկ դու միանգամայն ասող ժարդ ես: Յերկու անգամ նրանից յերբ-

տասարդ ես: Ինչ քանի՜ տարի ունես առաջդ: Մտածիր: Ուշքի
յեկ, ցույց տուր կամքիդ ուժը:

ՆԻԿԻՏԻՆ. (Գլուխը փակելով) Հը՛մ... այո... ինչ պատասխանեմ
քեզ: Այո, Պավլուշա: Խանութում եյի քեզ դեպի Գալիսիան, բայց
հետո՞ կովելուց հետո, պայքարում եյի զգացմունքներս դեմ: Մե-
րունու խոսքերը գլխիցս դուրս չեյին գալիս՝ «Գալիսիան թեպետ
և քո կի՛նն է, բայց քո մասնավոր սեփականությունը չէ»: Յես
թեպետ և անկուսակցական եմ, բայց հոգով այնուամենայնիվ
կոմունիստ եմ և հասկանում եմ ինչ է նշանակում դա: Թեպետ
Գալիսիային կորցնելը ծանր է ինձ համար, բայց նա իմ տարուկը
չէ, ճորտը չէ: Ի՞նչ նպատակով պայքարեցինք: Լուրջ վիճակում
խանդը յես ատամներովս պոկում եյի սրտիցս: Ինչ վերաբերում
է քեզ, ինչ վերաբերում է այն բանին, վոր դու իմ պատճառով
հեռանում էս Գալիսիայից, ինչ ասեմ... Լավ ընկեր ես դու: Յեղել
ես և կաս: Ահա բոլորը:

ԿԱՇԻՐԻՆ. Նու, լավ, բավական ե... Ի՞նչ կարիք կա:

ՆԻԿԻՏԻՆ. Սպասիր: Իմ վիճակի հարցը դժվար խնդիր է:
Ասում ես, վոր ինձնից ցած կանգնած հազարավոր մարդիկ կան.
այո, կան: Բայց ի՞նչ է նշանակում այդ: Այդ նշանակում է ցած
իջնել, յերբ այդ ցածինները վեր են բարձրանում:

ԿԱՇԻՐԻՆ. Յես քեզ առաջարկում եմ վոչ թե ցած իջնել, այլ
աշխատել ցածում յեղածներէ հետ:

ՆԻԿԻՏԻՆ. Բայց ցած գնալ սովորեցնելու համար—գո մի բան
է, իսկ ցածում թրև գալի՛ս ուրիշ է: Ինչ կարող եմ յես աալ: Ինչ
սովորեցնեմ, յերբ այդ ցածում յեղած հազարները գերահեղ են
ինձանից: Ալիքների նման թռչում են իմ գլխի վրայով, լողում
են հետու, իսկ յես լողաթղանթի նման որորվում եմ կանգնած
տեղում: Հիշում ես Տրոֆիմ պապիս: Պատահում եր, նստում եր
հողաթմբերի վրա և ամբողջ որը հայացքը հառում եր փողոցին,
փողոցի կյանքն եր դիտում: Յես այդպես ապրել չեմ կարող,—
չեմ կարող նստել հողաթմբին և համաշխարհային դեպքերը դի-
տել:

ԿԱՇԻՐԻՆ. Թ՛ն, աստանա... ով է քեզ ստիպում հողաթմբի
վրա նստել:

ՆԻԿԻՏԻՆ. Ասում ես մի տարի համբներեմ, բայց, տարին յե-
րեք հարյուր վաթսուներեք հինգ որ ունի: Իսկ յերաշխիք կա՞, վոր
մի տարում յես կարող եմ ուղղվել: Յես անբուժելի յեմ:

ԿԱՇԻՐԻՆ. Ինչո՞ւ: Այդ ինչ էս մտքերի գլուխք:

ՆԻԿԻՏԻՆ. Ե՛խ, Պապուշա, դու ինձ չես հասկանում: Ի՞մ բանը

վերջացած է:

ԿԱՇԻՐԻՆ. Վերջի վերջո ինչ էս մտադիր անել:

ՆԻԿԻՏԻՆ. Չգիտեմ, չեմ իմանում:

ԿԱՇԻՐԻՆ. Դա պատասխան չէ:

ՆԻԿԻՏԻՆ. Պապուշա. քեզնից մի բան էմ խնդրում:

ԿԱՇԻՐԻՆ. Ասա, ինչ վոր ուժերս թույլ տան, կանեմ:

ՆԻԿԻՏԻՆ. Մի գնա: Մնա Գալիկայի հետ:

ԿԱՇԻՐԻՆ. (Շվարած) Հը՛մ... Խոստովանում եմ, յես այդ չե՞յի

սպասում:

ՆԻԿԻՏԻՆ. Հալումա՞ղ եմ արել յես նրան: Բեզ հետ հանգիստ

կառնի: Նա լավ ընկեր է, հաղավաղյալ:

ԿԱՇԻՐԻՆ. Ձուք էս այդ ասում: (Վնուական) Վաղը գնում եմ:

վճռված է:

ՆԻԿԻՏԻՆ. Դու աշխուժանալիս վորոշել էս հեռանալ:

ԿԱՇԻՐԻՆ. Անպայման:

ՆԻԿԻՏԻՆ. Ինչ արած: Գնաս բարի, (Սևուր գեղում է) Անհի-

շաչար յեղիր:

ԿԱՇԻՐԻՆ. Յես դեռ կգամ քեզ հրաժեշտ տալու:

ՆԻԿԻՏԻՆ. Լավ, արի:

ԿԱՇԻՐԻՆ. Ա՛խ, Յեղյուխա, արամադրությունների ազդեցու
թյան էս յենթարկվում, գտնվում էս մոմենտի տպավորության
տակ: Կանցնի,—հետո ինքդ քո մտքերի, ինքդ քեզ վրա կծիծա-
ղես (Գնում է):

ՆԻԿԻՏԻՆ. (Հեծվիլից մտածկոս կրկնում է) Գտնվում էս մոմենտի
տպավորության տակ: Կանցնի,—հետո ինքդ քեզ վրա կծիծա-
ղես... Հը՛մ... Ձեռ գնա, յեղբայր, չես գնա: Յես քեզանից շուտ
կթռչեմ: (Հոգնած բնկնում է արտաթին: Շվում է գլուխը) Յովում
է... Սպասիր, յես քեզ անմիջապես կբժշկեմ: (Մոտենում է պատին,
ուր առաջ նազանն եր կախած: Անգնական օարժում) Վերցրին:
(Վերցնում է բանախ յիվ բուրդ) Ի՞նչ գրեմ... Գլուխս բթացել է...
(Իստոն ծիծաղ) Նույնիսկ մահվանս մասին յեղկաող գրել չգիտեմ:
(Գնում է, մի կանխ բառից հետո բնկնում) Մոմենտը կանցնի...
(Խոր մտածում է: Իեմք պարզվում է: Առաջ օարժումով պատում
է գրածը: Վերցնում է նոր քեր: Հանգիստ յիվ վնուական նորից
գնում է) Ահա... (Վեր կենալով) Դե: (Ձուր կողմը նայելով, ծած-

կում ե գլխաբեր) Մնաս բարով Գալոչկա: (Հեռանում ե, դուրս բաց բողմելով):

ԳԱԼԻՆԱ. (Մասուցարանի վրա մի բաժակ ձեռքին, կամաց, վսեփ մասեերի վրա մտնում ե Չադովի սենյակը) *Քնած ե:* (Բաժակով կարը գնում ե սեղանի վրա: Նախնայիս կամացով էայտելով անցնում ե մյուս սենյակը) *Ի՞նչ ե պատահել:* (Խիս վախեցած) *Ո՛ւր են գնացել:* (Սեղանի վրա բուրբ սեսելով, վերցնում ե յեվ կարդում: Կանգնում ե փառացած դիրքով):

ԿԱՇԻՐԻՆ. (Յերեկվայով: Կանգնում, մի բան հիշելով) *Ցյոդոր:* (Նայելով Գալինային): *Ի՞նչ ե պատահել...*

ԳԱԼԻՆԱ յերկուոր տալիս ե նրան:

ԿԱՇԻՐԻՆ. (Կարդում ե) *«Գուցե դու իրավացի յես, Գալոչկա: Պա՛վուչկա: Մոմենա ե: Տրամադրություն: Կփորձեմ դարձյալ տեղ գտնել մեր ժրջնանոցում: Իսկ հետո, կտեսնենք: Մնաք բարով: Մնաս բարով, Գալոչկա»:* (Պաուզա) *Այդպես...* (Նախից պաուզա: Հուզմունք յեվ անհարմար դրուրյուն) *Ծերուկը կանչում ե... գրնանք:*

ԳԱԼԻՆԱ. (Գլուխը ցնցելով) *Գնանք:* (Մտնում են Չադովի սենյակը) *Քեզ թվացել ե: Նա քնած ե:*

Ուշադրությամբ նայում են ՁԱԴՈՎԻ դեմքին: Վախեցած ձևերնդրում են նրա շնչառությամբ: **ԿԱՇԻՐԻՆ** զգուշությամբ շոշափում ե նրա ձեռքը...

ՁԱԴՈՎ. (Աչքեր բանալով) *Տո՛՛թ ե: Չա՛վակներս, լուսամուտը բաց արեք:* (Կաշիրինն ուժեղ օտրմունքով բացում ե լուսամուտը: Գարունն ե ներս բափանցում):

ՁԱԴՈՎ. (Խոր օհչում ե: Յույց սալով լուսամուտը) *Կյանքը կանչում ե:*

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220038295

[-264.]

ԳԻՆԸ 1 Ո. 50 ԿՈՊ.

212

А
38295

На армянском языке
В. Н. БИЛЛ-БЕЛОЦЕРКОВСКИЙ
ЖИЗНЬ ЗАВЕТ
Пьеса в 4-х действиях



АРМЕНГИЗ — ЕРЕВАН